



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

694

56

228(0.6)

2-76

11 FEB 2011

ՀՈՐՐՈՐԴ ԴՆՐՈՒ

107

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ


Բ.

1000
36345

Ն Ե Ր Ս Է Ս Մ Ե Ծ

Հայաստանի Հանրապետության Կրթության նախարարության հրատարակած

(Երկրորդ համար) «Կրթություն»



ԹԻՖԼԻՍ
Տպարան Տ. Ռոտինեանցի
1901

11 FEB 2014

8263

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՅՈՒՆԱԿԱՆ ՎԵՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՅՈՒՆԱԿԱՆ ՎԵՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՅՈՒՆԱԿԱՆ ՎԵՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Дозволено цензурою, Тифлисъ, 8 Августа 1901 г.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՅՈՒՆԱԿԱՆ ՎԵՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՄԵԾ ՆԵՐՍԷՍ¹⁾



1. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋ

Ներսէս Պարթև, որ և իրաւամբ Մեծ մահանունով ճանչցուած է, ազգային եկեղեցական պատմութեան մեծ անձնաւորութիւններէն մին է, և իւր պատմութիւնն ալ կարևոր դիպուածներով և քննադատական տեսութիւններով հարուստ է: Արդէն ըսինք թէ Աթանազինէի և Բամբիշի որդին է, հօրը պատմութիւնն ու եղիրական մահն ալ լիշատակեցինք. մայրը կաթողիկոսական ընտրութեան իբր կենդանի կը լիշուի (Բուզ. 69), ալ անկէ ետքը տեղեկութիւն չունինք:

Ներսէս ծնած պէտք է լինի 327-ին, իւր հօր 17 տարեկան եղած ատեն՝ հաւանական հաշուով: Ներսէս ազգական էր թագաւորին, վասն զի մէկ կողմանէ իւր մամը Տիրանի աղջիկ, և միւս կողմանէ իւր մայրը Տիրանի քույր կը կոչուին (Բուզ. 10. 44), թէպէտև դժուար լինի երկու ազգակցական յարաբերութիւնները միանգամայն արդարացնել: Խորենացին և Ներսէսի վա-

¹⁾ Շար. Զորբորդ դարու 2-այ եկ. լօղ. «Լումայ» 1901 Ա. ԼՈՒՄԱՅ

րուց պատմիչը, զոր ոմանք Ս. Մեսրոպը կարծեցին,
այլ աւելի Մեսրոպ երէցը պէտք է կարծել, այդ կէտը
բնաւ չեն լիշեր, և անհնար կը լինի Բուզանդի ըսած-
ները լուսաբանել:

Ներսէս ի տղայութենէ բարեմոյն և բարեսէր տղայ
մը եղած է (Բուզ. 69), և ըստ ցեղական սովորութեան
կանուխ ամուսնացած Մամիկոնեանց նահապետ Վար-
դանի՝ Սանդուխտ դստեր հետ: Վարդան ըստ պատմու-
թեան որդի է Արտաւազդայ և թոռն Վաչէի (Վարք 14):

Պատմիչք համաձայն են հաստատել թէ Ներսէս
Կապադովկիոյ Կեսարիա քաղաքին մէջ ուսմանց հետե-
ւեցաւ (Բուզ. 69, Խոր. 34): Այլ նշանաւոր է վարուց
պատմչին ըսածը թէ՛ «Աւսաւ ի Կեսարիացոց դաւանին
ամուսնաւն իւրով» (Վարք 14): Գեղեցիկ է ապաքէն
մանկամարդ հարսին իւր նորատի փեսայի հետ ուսման
և կրթութեան մէջ զարգանալու փափազն ու աշխա-
տութիւնը:

Բայց՝ խեղճ Սանդուխտ չկրցաւ իւր աշխատու-
թեան օգուտը վայելել: Աշխարհի լուսոյն պարզեց
մի լուսաւոր մանկիկ, Սահակ Պարթևը, ինչպէս կը
տեսնուի, նոյն իսկ Կեսարիոյ մէջ, և ինքն ալ նոյն
քաղաքի մէջ վախճանեցաւ, հարսնութեան երրորդ տա-
րին, և իւր հայրը Վարդան Մամիկոնեան անձամբ Կե-
սարիա եկաւ և փոխադրեց վաղամեռիկ դստեր մարմի-
նը, Լուսաւորչեան տոհմին երկրորդ զամբարանը, ի
թիւ Եկեղեաց, ուր թաղուած էր Արիստակէս հայրա-
պետը:

Երբ Յուսիկ վախճանեցաւ 348-ին Ներսէս Կեսա-
րիա էր, և երբ Արշակ թագաւորեց 350-ին, Ներսէս ան-
ցած էր Կոստանդնուպօլիս: Ըստ Խորենացոյ Ներսէսի
այդ վերջին ուղևորութեան նպատակն էր «առնուլ կին
զգուստը Ասպիոնայ ուրումն իշխանի մեծի» (Խոր. 34):

Այս տողը շատ ենթադրութեանց առիթ տուած է: Ո-
մանք, Խորենացոյն ընծայելով բոլոր հեղինակութիւնը,
մերթեցին Սանդուխտի ամուսնութիւնը և միայն յոյն
կին մը տուին Ներսէսի, և անոր զաւակ ըրին Սահա-
կը: Այլք Սանդուխտը և բիւզանդացի օրիորդը նոյնա-
ցուցին, և Բիւզանդիայէ հայազգի օրիորդ մը կին ըրին
Ներսէսի: Այլք ևս Ներսէսը այրիանալէ ետքը երկրորդ
ամուսնութեան մտած ենթադրեցին:

Մենք կը դիտեմք թէ պատմիչներէն և ոչ մին Ներ-
սէսի երկրորդ ամուսնութիւնը կընդունի: Վարուց պատ-
միչը կրկին անգամ Սանդուխտի մահը լիշելով (Վարք
14. 19), այրիութեամբ կը թողու Ներսէսը, և Բու-
զանդ՝ «լեալ էր ամուսնաւոր» խօսքերով (Բուզ. 69)
այրի մնացած լինելը կակնարկէ: Եթէ այրիութենէ յե-
տոյ կրկին ամուսնացած լինէր, ըստ կանոնաց՝ եկեղե-
ցականութեան ալ տնտեսար եղած կըլլար. հետևա-
պէս ըստ մեզ պէտք է ընդունել Սանդուխտի հետ ա-
մուսնանալը և կանուխ այրիանալը. իսկ Ասպիոն իշխա-
նի աղջկան լիշատակութիւնը պարզապէս շփոթութիւն
մը կը կարծեմք. և ահա թէ ինչպէս:

Արշակի թագաւորելը Յունաց միջամտութեամբ ե-
ղած էր, և Կոստանդ կայսր Հայոց թագաւորին հետ
բարեկամութիւնը աւելի ամրացնելու համար ուզեց յոյն
թագուհի մըն ալ տալ Հայերուն. մինչ միւս կողմանէ
յարմար հարսնացու մըն ալ պատրաստ էր: Կոստաս
կայսր՝ Կոստանդի եղբայրը իրեն կնութեան պիտի առ-
նէր Ապլաւիոս իշխանի մը աղջիկը, Ողոմպիադա անուն,
երբ չամուսնացած Կոստաս կը մեռնէր նոյն տարին,
և կայսրուհի լինելու սահմանեալ աղջիկը հնար չէր
այլ ևս հասարակ մարդու մը տալ: Այդ Ողոմպիադայն
է որ Արշակի կին եղաւ ինչպէս մեր պատմիչներէն
զատ (Խոր. 46, Բուզ. 126, Վարք 50), Ամմիանոս ալ

կրսէ (Մժմ. 140), և Ս. Սթանաս ալ Կոստանդը կը մեղադրէ որ Կոստասի խօսեցեալը Բարբարոսայ այսինքն յոյն չեղոոներու տուաւ (Քաթըրճեան. Բ. 490):

Մեր պատմագիրներ Ողոմպիադայի ամուսնութիւնը կը յետաձգեն. այլ նկատելով Կոստանդայ և Սրշակայ բարեկամութեան սկիզբը, նկատելով Կոստասայ մահուան թուականը, նկատելով Սրշակայ ամուսնութեան յարմար պարագայն, հարկ է ըսել թէ այդ ամուսնութիւնը կատարուեցաւ 35-ին կամ 351-ին սկիզբը: Խորենացին կընդունի թէ Ներսէս անձամբ Վոյս մի անուն Ողոմպիադա յագգէ կայսեր, կին ամէ Սրշակայ» (Խոր. 46), իսկ հարսնածութեան պաշտօնը Ներսէս կաթողիկոսէ աւելի Ներսէս պալատականի կը յարմարի. և որովհետև Ներսէս Կոստանդնուպոլիս կը գտնուէր, թագաւորին մօտիկ ազգականն էր, և պալատական անձ էր, շատ յարմար էր որ ինքն ընկերանար Սրշակայ հարսնացուին: Սյսպէս Ներսէս ո՛չ Ասպիոն՝ այլ Ապլուսոս իշխանին Ողոմպիադա աղջիկը կին բերաւ Բիւզանդիոնէ, ո՛չ իրեն՝ այլ Սրշակին, և այսպէս կը լուծուի մեր վերը ակնարկած շփոթութիւնը Ներսէսի ամուսնութեան վրայ:

Սրշակայ ամուսնութեան համար ալ կը զիտեմք անցողաբար, թէ Սրշակ զոնէ 45 տարեկան պէտք էր ըլլար այդ ատեն, և ենթադրելի չէ որ մինչև այն ատեն ամուրի մնացած լինի: Հարկաւ արքայորդութեան ատեն ալ ամուսնացած էր, և ըստ մեզ Սրշակի այդ առաջին ամուսնութենէ սերած թոռներ են Վալազդատ և Խոսրով և Վաւաշապուհ, որք իբրև բնիկ թագաժառանգներ թագաւորութեան կը կոչուին լետոյ, առանց իրենց հայրերը լիշուելու և ազգաբանութիւննին բացատրուելու: Հաւանաբար Սրշակայ առաջին ամուսինը մեռած էր, գուցէ քաղաքական նկա-

տուժով կնաթողութիւն ալ գործուեցաւ՝ որ բուրովին հեռու չէր ժամանակին խառնակ սովորութիւններէն, այլ լաւագոյն է Սրշակը այրի ենթադրել, քանի որ պատմութիւնը հակառակը չցուցներ: Ողոմպիադա իբրև թագուհի եկաւ և Ողոմպիադայի գաւակ պէտք է ընդունել Պապը, որ հարկաւ յոյն մօր գաւակ լինելուն համար Յոյներէն նախագասուեցաւ, և Սրշակի ուրիշ գաւակներէն առաջ թագաւոր հռչակուեցաւ լետոյ Յոյներու ձեռքով:

Ներսէսի գործերուն գաւնսյով, նա Բիւզանդիոնէ դարձաւ 350-ին 23 տարեկան եղած ատեն և անմիջապէս Սրշակի պալատական ծառայութեան մտաւ իբրև «սիրելի սենեկապետ և հաւատարիմ ի վերայ ամենայն զարգաց կենաց թագաւորութեան» (Բուզ. 69), որով Ներսէսի պաշտօնը մտերմութեան և վստահութեան առաւելութիւն ունեցող դիրք մը կը լինի:

2. ԿԱԹՈՒՂՈՍՈՒԹԻՒՆ

Ներսէս այդ պաշտօնին մէջ էր երբ 352-ին վախճանեցաւ Փառէն կաթողիկոս, և եթէ Փառէնի ընտրութեան ատեն ալ Ներսէսի վրայ խորհուած էր (Խոր. 34), հարկաւ նոյն միտքը պիտի գորանար Փառէնի մահուան ետքը, մանաւանդ որ ամեն ոք կը վկայէր թէ երիտասարդ այրի պալատականը իւր այդ փափուկ դիրքին մէջ ալ հոգւոր և անարատ և «ամենայնիւ կատարեալ յամենայնի» (Բուզ. 70) կեանք մը ունէր: Սակայն Ներսէսի դժկամակութիւնը առիթ տուաւ Շահակի Տեղապահութեան, ինչպէս որ Փառէնի պատմութեան մէջ լիշուեցաւ:

Տեղապահութիւնը երկարեցաւ, եկեղեցական կարգեր սկսան թուլնալ, և ամենուն միտքը միշտ իրեն

սիրած գաղափարին կը դառնար, այն է Լուսաւորչի արիւնէն հայրապետ մը ունենալ, որ պիտի լինէր ամեն չարեաց դարմանը: Նոյն իսկ աւագանին կը կարծէր, թէ որովհետեւ Արշակունեաց թագաւորական տունը ամեն վտանգներէ ազատուելով ժառանգած էր արքունական գահը, պէտք էր որ նոյն տան, կաթողիկոսական ճիւղն ալ հայրապետական աթոռին վրայ բարձրանար (Բուզ. 69, Աարք 18): Հասարակաց այդ բաղձանքին դիմաց միակ Ներսէսն էր որ կը հակառակէր, և կրցաւ պնդել մինչև որ վերջնական և լրացեալ գործով մը իւր ընդդիմութիւնը վերջացաւ, և 27 տարեկան երիտասարդ պալատականը կաթողիկոս եղաւ:

Մեծահասակէս ցուցման մը կերպարանով պատմուած է գործը: Թագաւորը իւր գահոյից վրայ, նախարարներ և պալատականներ աթոռին շուրջը շքեղ հանդերձանօք, եկեղեցականներն ալ ներկայ և ժողովուրդը որ ամբօթիւ թագաւորին կը դիմէ և բարձրաձայն աղաղակներով Ներսէսի կաթողիկոսանալը կը պահանջէ: Ներսէս ալ այն տեղ է իւր պաշտօնին բերմամբ՝ արքունական սուրն ու կամարը բռնած: Ընդհանուր պահանջին դէմ միայն Ներսէսի հակառակող ձայնը կը լսուի. նախ կը մերժէ, յետոյ իւր անարժանութիւնը կը պատմէ, յետոյ ժողովուրդը յանդիմանել կը սկսի, յետոյ ապագայ խոտուածանց սպառնալիքներ կընէ, իսկ ժողովուրդը և ոչ մէկին կարեւորութիւն կուտայ, և կը պնդէ, մինչև որ Արշակ բացարձակ իշխանութեամբ խնդիրը կը վերջացնէ:

Ներսէսին ձեռքէն կը խլեն սուրն ու կամարը, կը մերկացնեն զինքը պալատական զարդերէն և բռնութեամբ կը խոնարհեցնեն թագաւորին առջև, գոնգրագեղ մագերը կը խուզեն, կղերիկոսական պարեգօտ կը հագցնեն, և ձերուսի Փաւստոս եպիսկոպոս մըն ալ բե-

ղելով անմիջապէս սարկաւազ ձեռնադրել կուտան (Բուզ. 69—72, Աարք 20—24): Նկատելի է մագեր խուզելու գործողութիւնը զոր այժմ ալ կը կատարեմք մեք կղերիկոսաց վրայ, մինչ յունական սովորութեամբ կղերիկոսաց գլուխը երկաթ էլնելը արգելուած է:

Առանց այլ ևս յապաղելու ձեռնադրութեան պատրաստութիւններ կը կատարուին: Արքունական սպիտակաձիգ կառքով, 26 նախարարաց և 13 եպիսկոպոսաց և 4000 հեծելոց ընկերակցութեամբ Ներսէս Կեսարիա կը տարուի և քահանայ և եպիսկոպոս կը ձեռնադրուի: Ըստ պատմչաց ձեռնադրողն է Եւսեբիոս արքեպիսկոպոս և Ս. Բարսեղ ալ ներկայ է իբր քահանայ, և հրաշալի աղաւնի մը նախ Բարսղի և յետոյ Ներսէսի վրայ կը հանգչի: Սակայն Եւսեբիոս 362-ին եպիսկոպոս եղաւ և Բարսեղին քահանայութիւնը ինքը տուաւ, որով վերոյիշեալ պարագայք պատմութեամբ չեն արդարանար: Իսկ 353-ին Կեսարիոյ արքեպիսկոպոսն էր Գիանիոս, Եւսեբիոսի նախորդը, որ 340-է 362 նոյն աթոռը վարեց: Ներսէս միւսնոյն հանդիսութեամբ Վաղարշապատ դարձաւ և հայրապետական աթոռը բազմեցաւ:

3. ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներսէս հազիւ թէ հայրապետական աթոռը բարձրացած, երիտասարդական եռանդով, լաւագոյն կրթութիւն առած՝ մարդու փափագով, և բարեկարգութեան և բարեգարգութեան նախանձախնդիր զգացումով ձեռնարկեց նորանոր կարգադրութիւններ և կանոնադրութիւններ հաստատել, և իւր ըրածներն ալ ժողովական որոշմամբ ամրացնել ուզելով յատուկ ժողով մը գումարեց Ստեփանոս «որ էր տեղի լեալ նախնեացն ժողովոյ սիւնհոգոսին» (Բուզ. 76): Ներսէսի ժողովը կա-

նոնագիրքին մէջ չկայ, այլ թուականը կրնայ գրուել 354-ին, իսկ բարեկարգական կանոնները միայն պատմիչներէ պիտի քաղենք:

Եկեղեցական բարեկարգութիւնք և բարեգործական հաստատութիւնք Ներսէսի անձնաւորութեան և գործունէութեան նկարագիրը կը կազմեն, այնպէս որ կարող եմք զինքը բարեկարգութեանց լուսաւորիչ անուանել, ինչպէս որ Գրիգոր՝ հաւատոց լուսաւորիչ եղած էր, և Սահակ ալ յետոյ զպրութեանց լուսաւորիչ եղաւ: Ներսէս իւր այդ գործունէութեան մէջ իրեն առաջնորդ ունեցաւ կայսերական աշխարհին եկեղեցիներուն և ժողովներուն օրինակները և կանոնները. «Զբարեկարգութիւնն զոր ետես ի Յունաց աշխարհին, մանաւանդ ի թագաւորեալ քաղաքն ի սմա նկարագրէ» (Խոր. 42): Թերևս Աշտիշատայ կանոններն ալ յոյն ժողովներու քաղուածոյն էին:

Ներսէսի բարեկարգութեանց առաջիններն բարեգործականներն եղան: Բորոտներ, ուրուկներ և զանազան վարակիչ ախտեր ունեցողներ բնակութենէ կը մերժուէին և անխնամ կը մնային. Ներսէս ասոնց համար ուրկանոցներ և հիւանդանոցներ հաստատեց (Խոր. 42, Բուգ. 76, Վարք 40). Որբեր և ծերեր և չքաւորներն ալ անխնամ էին, Ներսէս իւրաքանչիւր քաղաքի կամ գիւղի մէջ աղքատանոցներ հրամայեց կազմել (Խոր. 44): Հիւրեր և օտարներ ապաստան չէին գտներ, անոնք ալ աղքատանոցներու մէջ ընդունել հրամայեց (Խոր. 42): Այս հաստատութեանց համար յատուկ գիւղեր և ագարակներ օրոշեց, և անոնց հասոյթներով, «յարգեանց անդաստանաց և ի կթից արօտականաց և ի գեղմանց» (Խոր. 44), կարօտելոց պէտքերը հոգալու կանոն դրաւ: Չեմք գիտեր թէ ուստի գատեց այդ հաստութեան գիւղերը, թագաւորական հրամանով, նախարարաց տուու-

չութեամբ, թէ հայրապետական առատաձեռնութեամբ: Թերևս այդ նպատակին յատկացուց Տրդատի օրէնքով ամեն ագարակէն չորս արտ, և ամեն գիւղէ եօթը արտ եկեղեցույ պէտքերուն յատկացնելու հրամանը (Սգաթ. 620): Միայն գիտեմք թէ ի հնումն կեդրոնական գանձ չկայր, ուր եկամուտներ կը հաւաքուէին և կը բաշխուէին, այլ նոյն իսկ արգեանց աղբիւրներ ուղղակի վայելողին կը յանձնուէին, ըլլար այն իշխան կամ եպիսկոպոս, եկեղեցի կամ անկեղանոց:

Բոլոր աշխարհին ընդհանուր բարեգործական հաստատութեանց վերին տեսուչ և յանձանձիչ կարգեց իւր հաւատարիմ սարկաւազը Խաղ Կարնեցին, «ի Մարգաց Կարնոյ» (Խոր. 44), կամ ի Կարին գաւառէ ի գեղջէ Մարագայ (Բուգ. 108), զոր տեղացիք այժմեան Կան գիւղի տեղը կը կարծեն: Պաշտօնին ընդարձակութիւնը և Ներսէսի իւր վրայ դրած վստահութիւնը, Խաղի կատարեալ գովեստը կը կազմեն: Յամենայնի իբր միւս ալ Ներսէս կը նկարագրէ զայն պատմութիւնը, ոչ միայն բարեգործական աշխատութեամբ, այլ և եկեղեցական և վարչական հանձարով, արիասիրտ և ճգնաւորական կենօք, ինչպէս որ նորէն առիթ պիտի ունենամք լիջել:

Մինչև այն ատեն միայնակեացք և վանականք և եպիսկոպոսունք քաղաքներու և գիւղերու մէջ ընտանեաց մօտ կապրէին. Ներսէս այդ կենակցութիւնը արգելեց. բնակութիւններէ հեռու վանականաց համար եղբայրանոցներ հաստատեց, և միայնակեաց համար անապոտներ կամ խրճիթներու խումբեր կազմեց, և եպիսկոպոսաց համար եպիսկոպոսարաններ շինել տուաւ: Վանականաց և միայնակեաց տեսուչներ օրոշեց, որք եղեն Շաղիտա ասորի և Եպիփան յոյն և Գինդ Սլիւուսի և Եփրեմ ոմն, բոլորն ալ Ս. Գանիէլի աշակերտներէն

(Խոր. 44, Վարք 39): Վանքերու հասոյթ ճարելու համար որոշեց որ թագաւորաց և իշխանաց և զօրավարաց գերեզմաններ վանքերու մէջ ըլլան, և փոխաբէն նախարարութեանց կողմանէ գիւղեր և ագարակներ նուիրուին վանքերուն (Վարք 39):

Ամեն գաւառներու մէջ յունարէն և ասորերէն դպրութեանց համար վարժոցներ բացաւ (Բուզ. 78), քանի որ ազգային դպրութիւն չկայր և եկեղեցական պաշտամանց մէջ ալ այդ լեզուները կը տիրէին ըստ սահմանակցութեան դրացի եկեղեցեաց: Բարձր Հայք, Արարատ և Սիւնիք յունարէն կը գործածէին, մինչ Տուրուքերան, Աղձնիք և Վասպուրական ասորերէնի կը հետեւէին, և այս ալ յայտնի կը լինի նոյն իսկ տեղեաց և անձանց պատմական լիշատակներէն: Ներսէսի դպրոցներուն աշակերտներն եղան որք հալ դպրութեանց գաղափարը յղացան և գործը կատարեցին, և որոց գլխաւորն եղաւ Ս. Մեսրոպայ, Ներսէսի ձեռնասուն աշակերտը (Վարք. 83):

Գրուած է թէ Ներսէս «նորոգէր զգահս իշխանացըն Հայոց... բարձս չորեքհարիւր» (Վարք. 32): Այդպիսի բոլորովին պալատական կարգադրութիւն մը թերևս աւելի յարմարէր Ներսէս սենեկապետի վերագրել քան Ներսէս հայրապետի, ինչպէս կընէ վարուց պատմիչը, սակայն մենք կը կարծեմք թէ այս 400 թիւը լուսաւորչէ հաստատուած 400 եպիսկոպոսարաններուն հետ կապ ունի (Ագաթ. 634), և Ներսէսի գործն եղած է նախարարութեանց գահնամակի ուղղութեամբ եպիսկոպոսութեանց կարգն ալ վերակազմել և պէտք եղած կարգադրութիւնները և ձեռնադրութիւններն ընել: «Կարգեցան կարգք կաթողիկէ եկեղեցւոյ, բազմացան կարգք սրբութեան պաշտամանց և պաշտօնէից յաճախութիւն» (Բուզ. 77), խօսքն ալ նոյն միտքը կուտայ:

Ներսէսի բարեկարգութեանց գլխաւորներէն կը համարուին հետևեալ երկուքն ալ. այսինքն է մերձաւորաց ամուսնութեանց արգելքը, և մեռելոց վրայ ոճրագործ և անպատշաճ սուգերու արգելքը (Խոր. 42): Կը լիշուի ևս «ի մեռելոտոյ և յարենէ ուտելոյ» արգելքը (Բուզ. 77), սակայն յետագայ կանոններ այլ ևս այդ կէտը չեն շօշափեր, որ լոկ առաքելական արգելքին (Գործ. ժե. 29) հետևողութեամբ լիշուած կերևի: Այլ գեղեցիկ է գերեաց, ծառայից, աշակերտաց և կըրտսերաց հետ գութ ունենալու կանոնը (Բուզ. 77), իբր զի ի նախնումն տեարք և ուսուցիչք և ծնողք բռնական և անգութ իշխանութիւն կը բանեցնէին իրենց ստորադասելոց վրայ:

Երբ Ներսէս ընդհանուր բարեկարգութեան ջանքով կը փայլէր, դրած օրէնքներուն պահպանութիւնը իրմէ կսկսէր. «նախ ինքն առնելով առ իւր անձն բարի, և ապա այլոց օրինակ բարեաց դնելով», և «վասն ճշմարտութեան մինչև ի մահ մարտնչէր» (Բուզ. 75), ախտաւորները «ինքն իւրովք ձեռօքն լուանայր զամենեսեան, օծանէր, պատէր, և ինքնին իսկ ջամբէր նոցա զիւրաքանչիւր կերակուրս» (Բուզ. 78), «զտիւ և զգիշեր ոչ դադարէր ի խրատելոյ և ի բողոքելոյ», և «զվերակացութիւնս աշխարհի ամենայն հոգաբարձութեամբ, առանց ամենայն ծուլութեան և ամենայն յապաղութեանց տանէր մինչև ի վախճան իւր, և ոչ երբէք ուրեք եղև նման նմա այլ ոք ի Հայաստան երկրի» (Բուզ. 80), և իւր սրբութեան արգիւնք «մեծամեծ նշանս և բժշկութիւնս առնէր հիւանդաց» (Բուզ. 7 է):

4. ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Ներսէսի անձին և արժանիքին համառօտ պատ-

կերը տալէ չետոյ, իւր գլխաւոր գործառնութեանց պիտի անցնիմք, այլ ժամանակագրութիւնը մեծ արգելք մը կը յարուցանէ, թէ իւր պաշտօնավարութեան տևողութիւնը որոշելու և թէ պատահարները շարադասելու: Ներսէսի հայրապետութեան տևողութիւնը 34 տարի դրած է Խորենացին (Խոր. 92), և այս թիւը կրկնուած է ամեն հիներէ, բաց յՕրբելեանէ որ 20 տարի կուտայ (Օրբ. Բ. 249): Վարուց պատմիչը թէպէտ ի վերջոյ 34 տարի ըսած է (Վարք. 115), սակայն լընթաց պատմութեան անգամ մը 25 տարի կուտայ նորա գործունէութեան (Վարք 41), առանց այդ տարբեր թիւերը բացատրելու, թերևս աքսորանաց ենթադրեալ 9 տարիները գործունէութենէ կը գեղչէ:

Երբ մի կողմանէ Ներսէսի 34 տարի հայրապետութիւն կենթադրուի, միւս կողմանէ ալ Արշակի 30 տարի թագաւորութիւն կը տրուի (Խոր. 82), որ նոյնպէս դժուարութեան կը հանդիպի: Այդ թիւերու հիմը այն է թէ Պապ սպանուած է Թէոդոսի 20-րդ տարին (Խոր. 96), մինչ իրօք Թէոդոս 16 տարի միայն թագաւորած է, և Պապի սպանութիւնն էլ ժամանակակից Ամմիանոսի վկայութեամբ եղած է Վաղէսի 11-րդ տարին: Վաղէսի մնացեալ 4 տարիները և Թէոդոսի տրուած 20 տարիները, 24 տարուոյ սխալ կը կազմեն Խորենացու ժամանակագրութեան մէջ, որ կշիռ կերպով կը տեսնուի թէ թագաւորաց և թէ վաթոյղիկոսաց տարիներու վրայ, և ուղղութեանց մէջ յանձնարարելի է այդ կշիռը չկորսնցնել, ինչպէս Ս. Յուսիկի պատմութեան մէջ ալ յիշեցինք:

Լուսաւորչայ 30 տարին 25-ի, և Վրթանէսի 15 տարին 8-ի իջեցնելով միայն 12 տարի գեղջած կըլլամք կաթողիկոսաց գաւազանէն, և մնացեալն ալ անհրաժեշտ է գեղչել Ներսէսի և Արշակի տրուած տարիներէն և

այդպէս կրնեն ամեն նոր հետախոյզներ: Թագաւորաց գաւազանին մէջ առաջին 12 տարիներ կուղղուին Տըր-դատայ տարիները կանուխ սկսելով, իսկ վերջին մասը Արշակէ և Ներսէսէ գեղչելու պատճառը՝ նախնաբար անոնց պաշտօնավարութեան անարդարանալի երկարատեւութիւնն է, և երկրորդաբար ժամանակակից դէպքերու հետ եղած կապակցութիւնն է:

Մեր կազմելիք ժամանակագրութեան հիմը Պապայ մահն է Վաղէսի 11-րդ տարին, որ է ըսել 374-ին, և Արշակայ գերութիւնն 368-ին, ըստ պատմելոյ Ամմիանոսի (Ամմ. 328 և 282). իսկ Ներսէսի մահն ալ Պապայ սպանութիւնէն քիչ յառաջ լինելով պէտք է դնել 373-ին: Պաշտօնավարութեանց սկզբնաւորութիւնները, հնարաւոր յարմարութիւններով և երբեմն ալ ցուցուած տարիները՝ լոկ սկսած և ոչ աւարտած տարիներ հաշուելով, հաստատեցինք արդէն, Արշակայ թագաւորելը 350-ին և Ներսէսի կաթողիկոսանալը 353-ին, պահելով Խորենացու կշիռը թէ Ներսէս կաթողիկոս եղաւ Արշակի 3-րդ տարին (Խոր. 42): Ըստ այսմ Արշակ 350-է 368 իբր 18 տարի թագաւորութիւն կունենայ, իսկ Ներսէս 353-է 373 իբր 20 տարի հայրապետութիւն ըրած կըլլայ համաձայն Օրբելեանի ցուցակին:

Իրացի մեծ տէրութեանց վեհապետներուն հետ բաղդատուելով, Արշակ կսկսի Կոստանդի 11-րդ տարին, կը լրացնէ նորա 24 տարիները, Յուլիանոսի 2 և Յովիանոսի 1 տարիները և կը դադարի Վաղէսի 5-րդ տարին: Իսկ Ներսէս կսկսի Կոստանդի 17-րդ տարին, կը լրացնէ Կոստանդի 24, Յուլիանոսի 2 և Յովիանոսի 1 տարիները, և կը վախճանի Վաղէսի 11-րդ տարին: Իսկ Պարսից գահուն վրայ կը գտնեմք միշտ Շապուհը, որ 309-ին ծնած օրը թագաւոր հռչակուած լինելով

մինչև 379 թագաւորեց, և ժամանակակից եղաւ մինչև հիմայ յիշուած թագաւորաց և կաթողիկոսաց: Այդ բաղդատական հաշիւները օգտակար են յառաջ բերուելիք պատմական զիպուածոց տարիները որոշելու և կարգը հաստատելու համար:

5. ԳՆԷԼ ԵՒ ՓԱՌԱՆՁԵՄ

Ներսէսի հայրապետութեան գործունէութեան առաջին տարիները կանցնին բոլորովին ներքին բարեկարգութիւններով, ներսէն հանդարտութիւն և զուրսէն խաղաղութիւն կը նպաստեն այդ աշխատութեանց. կաթողիկոսի և թագաւորի մէջ ալ կատարեալ համաձայնութիւն կը տիրէ, որուն նշան է պատմութեան վկայելը. թէ Արշակ՝ կենաց առաջին մասին մէջ աստուածային իմաստութեան հետևող էր, և միայն վերջին տարիներուն մէջ ուղղութենէ շեղեցաւ (Բուզ. 109): Մեր պատմելիք պատահարները այլ ևս Արշակայ և Ներսէսի առաջին տարիներուն չեն պատկանիր, զի լաւ յարաբերութեանց խզումներ կսկսին:

Տիրանի թագաւորութեան ժամանակէն Արշակայ Տրդատ եղբայրը և սորա որդին Գնէլ և Արտաշէս մեռած եղբոր որդին Տիրիթ պատանդ զրկուած էին Կոստանդնուպոլիս: Տրդատ կայսեր հրամանով սպանուեցաւ քաղաքական յարաբերութեանց շփոթած ատենը: Խորենացի Վաղենտինոս կայսեր անունը կուտայ (Խոր. 44), այլ պէտք է Կոստանդ ըլլայ սպաննողը, եթէ երբէք Տրդատ բնական մահուամբ մեռած չէ և սպանութիւնը կասկածով զրուցուած է, ինչ որ պատանդներու նկատմամբ շուտով կրնայ ծնիլ: Երբ Կոստանդ և Արշակ բարեկամ եղան և Ողոմպիադա հարսնացու զըրկուեցաւ, Գնէլ և Տիրիթ պատանդներն ալ ի միասին

արձակուեցան: Պատմութեան մէջ ալ յիշուած է որ Ներսէս Ողոմպիադան և պատանդները ի միասին բերաւ (Խոր. 46), և ըստ մեր հաշուոյն թուականը 350-է, Ներսէսի պալատականութեան ատեն:

Գնէլ կայսրէն հիւպատոսութեան աստիճան առած էր (Խոր. 46), և իւր արժանեօք ամենուն սիրելի էր, յաջող ամուսնութիւն ալ ունեցաւ Սիւնեաց Անդովկ կամ Անդիոք նախարարին Փառանձեմ աղջկան հետ, որ բնական և բարոյական ձիրքերով հայ օրիորդներուն առաջինը նկատուած էր: Գնէլ կայսերական պալատան մէջ բարձր կրթութիւն առած լինելուն, գլխաւոր նախարարք իրենց զաւակները Գնէլի մօտ դրին «գարդու և զինու» հանդերձանքը անկէ սորվելու համար: Բայց Գնէլ նախանձու առարկայ դարձաւ, մանաւանդ իւր հօրեղբորորդուն Տիրիթին, որ շարունակ քսութիւններով Արշակայ կասկածները զրգուեց: Գնէլ իւր կուրացեալ պապուն Տիրանի մօտ կը բնակէր ի Կուաշ, Այրարատ նահանգին մէջ. անոր համար Արշակ Տիրանի վրայ ալ սկսաւ կասկածել. նախ Գնէլը հեռացուց Սաբերանի (այժմ Բերկրի, Վանայ մօտ), և յետոյ Տիրանը սպաննել տուաւ ի ծածուկ, վերջապէս Գնէլն ալ դաւաճանութեամբ հրաւիրեց ի Գառնի հանդիսի պատճառով, և նենգութեամբ սպաննել տուաւ հետևեալ պարագայից մէջ:

Նաւասարդի տարեկան տօնն էր, և այն օր Ներսէս ալ իբր հայրապետ թագաւորի մօտ էր: Գնէլ տօնին հասնելուն պէս խարդախութեամբ կը ձերբակալուի, և Փառանձեմ որ իրեն հետ էր, անմիջապէս եկեղեցի կը վագէ որ հայրապետին լուր տայ: Ներսէս որ եկեղեցուց մէջ առաւօտու ժամերգութիւնը կը կատարէր, աղօթքը կընդմիջէ և թագաւորին կերթայ, բայց Արշակ սամուրենի մուշտակին մէջ գլուխը ծած-

կած սուտ քուճ կը ձևացնէ, մինչև որ Երազմակ դահ-
ճապետ Գնէլի սպաննուած լինելուն լուրը բերէ: Ներ-
սէս կը զայլրանայ, դաւաճանութիւնը կը խայտառակէ,
Արշակը կը յանդիմանէ, և երկնից անէծքը կը սպառ-
նայ նորա գլխուն, և կը հեռանայ, և այդ պարագա-
յէն թագաւորի և կաթողիկոսի յարաբերութիւնք կը
ցրտանան և հետզհետէ կընդհատին (Բուզ. 119—124,
Վարք 43—49): Խորենացի որսի մէջ կեղծեալ դիպուա-
ծով սպաննուած կը կարծէ Գնէլը, այլ մեր պատմածը,
որ Բիւզանդէ և վարուց պատմիչէն առնուած է, աւե-
լի պատմական է:

Գնէլի սպանութեան թուականը ճշդելու կը ծա-
ռայեն Բուզանդի սա խօսքերը վասն զի վաղիւն հասե-
լոյ առաւօտուն օրն լուսանայր կիւրակէն, և յայնմ ա-
ւուր տօն դիպեցաւ լիշատակի Մեծին Յովհաննու որ ի
Գրիգորէ և ի Տրդատայ յաւանին Բագաւանին կարգեալ
էր» (Բուզ. 121): Արդ այս տօնը Նաւասարդի տարեմու-
տին տօնն էր (Ագաթ. 619), ինչպէս այս տեղ ալ լիշ-
ուածէ, թէ Արշակ «ոչ կամեցեալ զտօնս Նաւասարդաց
առանց քո անցուցանելը» (Բուզ. 120): Արդ այս միջոցին
Նաւասարդի 1-ը կիրակիի հանդիպած է 359 օգոստոս
29-ին, ինչպէս որ հայկական տոմարին ճշգրտած հաշիւ-
ներով կըրցուցուի: Այդ թուականը պատմական պահանջ-
ներու ալ կըհամապատասխանէ, զի մինչև Գնէլի սպա-
նութիւնը թագաւորի և կաթողիկոսի յարաբերութիւնք
լաւ եղած են, և սպանութենէ սկսելով խանգարուած
են, զի Արշակի ընթացքն ալ կարծես կը խանգարի: Տիրա-
նը և Գնէլը սպաննել տալէն ետքը, Տիրիթն ալ սպան-
նել կուտայ զգալով անոր դաւաճանութիւնը: Աւելին
ալ կայ. Գնէլի յուզարկաւորութեան առթիւ Արշակ կը
ճանչնայ Փառանձեմը և կը հաւնի անոր. և Տիրիթը
մէջտեղէն վերցնել կուզէ, երբ նա կը պատրաստուի

իւր հօրեղբոր որդւոյն այրին իրեն կին առնուլ: Ար-
շակ Փառանձեմը իւր արքունեաց մէջ կառնէ, բայց Փա-
ռանձեմ չհաւանիր՝ իբրև հարձ ծառայել Արշակայ հա-
ճոյից:

Աստի կը ծագի Ողոմպիադայէ ազատուելու խոր-
հուրդը, և թագուհին կը սպանուի քսոմնելի դաւաճա-
նութեամբ: Արշամունեաց Գոմկունք (այժմ Վարդովայ
Գոյնուկ) գիւղէն Սրջիւնիկ անուանեալ պալատան դրան
երէց մը եկեղեցւոյ մէջ թագուհին հաղորդելու ատեն
«ընդ կենաց դեղոյն զգեղ մահու» կը խառնէ (Բուզ.
127), Ողոմպիադա կը մեռնի, Արշակ այրի կը մնայ, և
Փառանձեմ Արշակայ կին և Հայոց թագուհի կը լինի:
Պատմութիւնն Փառանձեմը կամբաստանէ ընդհանուր
առմամբ, որովհետև ինքն էր որ կօգտուէր, սակայն
մեծ մեղադրանքը Արշակի վրայ կը ծանրանայ, վասն
զի Գնէլի և Տիրիթի սպանութիւններով Փառանձեմը
իւր արքունեաց մէջ կառնէր, և Փառանձեմ իւր դա-
ւաճանութիւններէն չէր կրնար օգտուիլ և տիկնու-
թեան չէր հասներ, եթէ Արշակ չլինէր այդ ընթաց-
քին կարգադրողը:

Ողոմպիադայի սպանութիւնը քաղաքական նպա-
տակի ալ պիտի ծառայէր, որովհետև Ողոմպիադա Յու-
նաց կողմանէ պաշտօնապէս դրուած թագուհի մ'էր, և
այդ թագուհին պէտք էր մէջտեղէն վերցնել, երբ Ար-
շակ սկսած էր արդէն Յոյներէն յոյսը կտրել, յունասէր
քաղաքականութենէ հեռանալ և պարսկասէր քաղաքա-
կանութեամբ իւր կացութիւնը ամրացնել: Արշակ ան-
գամ մըն ալ Պարսկաստան դացեր էր Վարդան Մամի-
կոնեանի միջնորդութեամբ և աւետարանի վրայ երդու-
մով Նապուհին բարեկամութիւն խոստացած էր: Այդ
դիպուածը Յուլիանոսի պատերազմէն
տեղի ունեցած լինելով (Բուզ. 140)

ԱՅՍԲ
36345

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՍՏՊԵՆԱՅԻ
ՍԵՆՏՐԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
2

355-ին, և որչափ ալ Ներսէսի ազդեցութեամբ յունասէր քաղաքականութիւնը դեռ կը շարունակէր, սակայն Նապուհի և Արշակի յարաբերութիւնները սկսեր էին լաւանալ: Վասակ Մամիկոնեան ալ Պարսից դէմ ատեւութեամբ և իւր եղբօր Վարդանի դէմ հակառակութեամբ, յաջողած էր Արշակը լեղակարծ կերպով Պարսկաստանէ Հայաստան բերել, սակայն չէր կրցած բոլորովին Արշակի պարսկասէր միտումները դադրեցնել, և Արշակ 358 ին հալ գունդեր ալ յղած էր Միջագետք իբր Նապուհի նիգակակից: Այդ ուղղութիւնը իւր լրումը կը գտնէր միւս տարի 359-ին Ողոմնիլագայի սպանութեամբ, որ քստմնելի ոճրագործութիւն լինելէ զատ, ուղղակի Յունաց դէմ անարգանք էր: Ներսէս հայրապետ, որ յայտնապէս յունասէր քաղաքականութեան քարեկամ էր, և պարսկասէր քաղաքականութեան բացարձակ հակառակող, կը զգար որ հնար չէր իրեն ալ ևս Արշակի հետ լաւ յարաբերութիւն պահել և արքունեաց մէջ ազդեցութիւն գործածել, և կը պարտաւորուէր հրապարակէ քաշուիլ:

6. ՆԵՐՍԷՍԻ ԲԱՇՈՒՒՂԸ

Ներսէս թէսլէտ բուն հետապնդող մ'էր և դրժուարութիւններէ վհատող չէր, հրապարակէ քաշուիլ կը պարտաւորուէր, որովհետեւ պարագաներն ալ իրեն նպաստաւոր չէին: Եթէ ինքն յունական քաղաքականութիւն կը պաշտպանէր, շարժառիթը քրիստոնէական ուղղափառ հաւատքն էր. դժբաղդաբար Կոստանդ իւր վերջին տարիներուն մէջ ուղղափառները հալածող եղած էր, և Կոստանդի ալ կը յաջորդէր քրիստոնէութիւնը ուրացող և հալածող Յուլիանոս մը, և Ներսէսի հնար չէր այսպիսի քաղաքականութեան պաշտպան

Պանգնել: Ահա թէ ինչպէս 359-է 363 Ներսէս քաղաքական գործունէութենէ ձեռնթափ լինել կը պարտաւորուէր:

Պատմութիւնը կրօ՛յ թէ Ներսէս ալ ևս չէր գար «ի բանական առ թագաւորն», այսինքն է մասնակից չէր լիներ արքունական գործերու, յորս կաթողիկոսներն թէ իբր երկրին մեծամեծներէն մին, թէ իբր Պահլաւունեաց կամ Պարթևեանց տան նահապետ, և թէ իբր հոգևոր պետ, հաստատուն և կանոնաւոր մասնակցութիւն ունէին, մանաւանդ թէ գերազանց և նոյն իսկ թագաւորին ազդեցութիւնը կշռող դեր կը վարէին (Բուզ. 133): Բայց երբ քաղաքական գործերէ և արքունական յարաբերութիւններէ ձեռնթափ էր Ներսէս, հոգևոր պաշտօնը չէր մոռնար, և կը շարունակէր «ուղղել, կարգել և հաստատել զեկեղեցիսն» (Բուզ. 114): Վարուց պատմիչը մինչև Ուռհա ալ կը տանի զՆերսէս (Վարք 66), և անհնար չէ որ իւր հովուական պտոյտները մինչև Միջագետք հասուցած և Եդեսիա այցելած լինի:

Այդ միջոցին է Չոնակի հակաթոռ կաթողիկոսութիւնը: Արշակ նկատելով Ներսէսի հեռանալը, արքունեաց մէջ կաթողիկոսական դիրքը դատարկ չթողլու համար, կամ թէ Ներսէսի հակառակութիւն ընելու համար «զՉոնակ ոմն անուն» կաթողիկոս ընել կուտայ (Բուզ. 127): Միայն Աղձնեաց և Կորզուաց երկու եպիսկոպոսները կուգան ձեռնադրելու, կամ թէ վարուց պատմագրին համաձայն՝ Աղձնեաց և Անձևացեաց և Գառնոյ երեք եպիսկոպոսները միայն կուգան, իսկ մնացեալ եպիսկոպոսներ չեն ուզեր գործակցիլ (Բուզ. 127, Վարք 66):

Սակայն Խորենացի չունի երբէք Չոնակի անուն, յետագայ պատմագիրներ և ցուցակագիրներ ալ նորա

հետևողութեամբ Չոնակի անուն չեն լիշեր: Նկատելի է ևս որ նոյն իսկ Բուզանդայ պատմութեան մէջ, Չոնակ անգամ մը լիշուելէ ետքը բոլորովին կանհետանայ, ոչ գործունէութիւն ունի և ոչ դեր, և երբ քիչ ետքը Ներսէս նորէն Արշակի հետ կը հաշտուի, չգիտցուիր թէ ինչ եղաւ Չոնակը, կամ թէ ինչպէս հեռացաւ կաթողիկոսութենէն: Բուզանդ Չոնակի նկարագիրն ալ տալով միանգամ կը կոչէ զնա «այլ զգօն», և միւս անգամ կանուանէ «սարուկ ի սարկաց արքունի» (Բուզ. 127), և պատճառն այն է որ թագաւորը շարունակ չյանդիմաներ, չանիծեր, չսպառնար:

Պէտք է նկատել ևս թէ Արշակ չէր կրնար սինլքօր անձ մը հանել Ներսէսի դէմ և զայն իբր կաթողիկոս ընդունել և ընդունել տալ առանց եպիսկոպոսաց գործակցութեան. ուստի Չոնակ ըսուածը պէտք էր որ եպիսկոպոսներու մէջ դէրք և դեր վայելող մէկը ըլլար, աւելի իբր կաթողիկոսութեան տեղակալ, քան թէ բուն կաթողիկոս, և առ այս նախկին տեղապահ Շահակէ յարմար մէկը չեմք գտներ. մէկ կողմէ զգօն և միւս կողմէ յարմարող անձ մը: Մինչև իսկ պիտի ըսեմք թէ մի միայն տեղը, ուր այս անունը կը գտնուի, ՉԱՀԱԿ գրութիւնը սխալ ընթերցմամբ ՉՈՆԱԿ եղած է: Այլիվանեցին Ներսէսի յաջորդ Շահակի անունը Չոնակ կը գրէ, և երկու անունները փոխանակելով մեր կարծիքին իրական հաստատութիւն կուտայ:

Չոնակի միջադէպը նորութիւն մըն է նախընթաց պատմութեան համար, դժբաղդաբար նմաններ շատ ունի յետագայ պատմութեան մէջ, գլխաւորաբար Սահակի ժամանակ: Այս պարագայն մեզի կը հաւաստէ կաթողիկոսներու կրկնակի դերը, մին իբր հոգևոր պետ և հոգևորական գործերու վարիչ, և միւսը իբր երկրին աւագանւոյն գլխաւոր և քաղաքական գործերու մաս-

նակից: Ներսէս իւր քաշուելովը միայն քաղաքական գործերը լքանող եղաւ, և միայն այս քաղաքական գործերուն համար փոխանակող մը բերուեցաւ, մինչ հոգևորական գործերը կարող եղաւ ամբողջաբար պահել ու վարել: Եպիսկոպոսաց մեծամասնութիւնը, կամ լաւ ևս ամբողջութիւնը Ներսէսի նմանողութեամբ քաղաքական գործերէ ձեռնթափ մնաց, առանց իւր հոգևոր պետէն բաժնուելու և հոգևոր գործերէ քաշուելու. և միայն երկու կամ երեք եպիսկոպոսներ համակերպեցան թագաւորին կամքին և Չոնակի գործակցեցան:

Պարագաներ ալ այնպէս և այնչափ դժուարին էին, որ Ներսէս բազմ մը պիտի սեպէր քաղաքական գործունէութենէ հեռանալը: Ինքն ի ծնէ և ի բնէ քրիստոնեայ և յունական կոչման պաշտպան, չէր կրնար ոչ արիանոս Կոստանդի վերջին զեղծումները և ոչ հեթանոս Յուլիանոսի ընթացքը պաշտպանել, և ոչ ալ կըրնար պարսկական կամ մոգական կրօնքի կողմը հակիլ: Արքունիքն ու նախարարութիւնը վարանոտ քաղաքականութեամբ միայն օրը օրին վտանգէ զերծ մնալու նպատակին կը ծառայէին. և ասոր հակառակ աւելի ապահով ճանպարհ մը ցուցնել հնար չէր: Ներսէս այդ անհնարին և անել կացութեան առջև կը քաշուի, և թող կուտայ որ ուրիշներ ընեն ինչ կրնան: Կոստանդի վերջին և Յուլիանոսի երկու տարիներուն մէջ իւր անունը չլսուիր. և անմասն կը մնայ ինքն այդ ահեղ շփոթութեանց պատմութենէն:

Լոկ քաղաքական պատահարք եկեղեցական պատմութեան շրջանակէն դուրս են, այլ յետագայ դիպուածներու կապակցութեան համար բաւական լինի լիշել, թէ Արշակ 360-ին Կոստանդի հետ տեսնուեցաւ ի Կեսարիա և բարեկամութիւնը նորոգեց (Սմմ. 139), այլ յետոյ դարձեալ երկու պետութիւնները միանգամայն գոր-

ծածել աշխատեցաւ. Յուլիանոսէ Հրաման ստացաւ անոր օգնութեան երթալ (Ամմ. 192), այլ օգնութիւն չդրկեց (Ամմ. 226); և միանգամայն Պարսից գաւառները աւարեց (Ամմ. 241): Երբ կացութեան դժուարութիւնները ի նկատի առնուին, Արշակայ ընթացքը բացարձակապէս դատապարտելի պէտք չէ նկատուի, թէպէտև ստոյգ ալ է որ վարանոտ ընթացքներ առանց վնասի չեն մնար:

Յուլիանոս յաղթուեցաւ Շապուհէ և սպանուեցաւ 363 յունիս 26-ին. և Յովիանոս պարտեալ բանակի մէջ կայսր ընտրուելով ծանր պայմաններով խաղաղութիւն կնքեց: Մեծ Հայոց Յայնկոյստի գրիսեան Հինգ գաւառներ, Արզն, Մոկք, Հարեւանդ, Հեր և Կորզուք (Arzanena, Moxoena, Zabdicena, Hehimena, Corduena, Ամմ. 240), Պարսից թողուեցան, և Յոյնք յանձնառու եղան այլ ևս Հայոց չօգնել (Ամմ. 241, Բուզ. 140): Այդ դաշնակցութիւնը որ Հայերը անպաշտպան կը թողուր Պարսից առջև, Արշակայ սպասածը չէր, և Պարսից երկիւղը զօրացած ատեն նորէն Յունաց հովանաւորութիւնը որոնելու հարկ ծագեցաւ:

7. ՆԵՐՍԷՍ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Պարագայից փոփոխուելով ահա Ներսէս նորէն հրապարակի վրայ է. իսկ Չոնակայ անունն իսկ չլիշուիր. ինչպէս յանկարծ երևեցաւ այնպէս ալ յանկարծ կը մոռցուի: Արշակ ինքնին Ներսէսի ետեւէն կերթայ, և զզջական և աղաչական միջոցներով կը հաճեցնէ որ քաջուած զիրքը թողու և գործոց գլուխ անցնի (Բուզ. 115, Խոր. 66, Վարք 51): Ներսէս կը հաւանի, որովհետև իւր յարաբերութիւնք պիտի լինին ուղղափառ Յովիանոսի հետ, և իւր նպատակը պիտի լինի յունա-

կան պաշտպանութիւն պատրաստել պարսկականին դէմ: Նախ և առաջ նախարարներու համաձայնութիւնն ալ կը պատրաստէ, թագաւոր և կաթողիկոս և նախարարք կը միաբանին և իրարու գործակցելու երզում կրնեն. և միայն Մեհրուստան Արծրունի (Բուզ. 144), և յետոյ Վահան Մամիկոնեան (Բուզ. 164), կամ թէ Մեհրուստան և Վահան ի միասին (Խոր. 68), չեն համաձայներ և սրտով ու հաւատքով Պարսից կողմը կանցնին:

Կորոշուի դեսպանութիւն մը լղել առ կայսրն, և հակառակ յունապարսիկ դաշնաց կայսերական պաշտպանութիւն խնդրել Հայաստանի վրայ: Թերևս Յովիանոսի երթալու դիտմամբ սկսաւ խորհուրդը, այլ Յովիանոս 7 ամիսէ մեռաւ, և դեսպանութիւնն Վաղէսի ժամանակ հասաւ ի Կոստանդնուպոլիս: Ինքն Ներսէս գլուխ էր դեսպանութեան, և իրեն հետ այլ ևս 9 (Բուզ. 106), կամ 17 (Վարք, 52) նշանաւոր նախարարներ. թէպէտև յառաջ բերուած անուններուն մէջ շփոթութիւն կը տեսնուի, զի Վարդան Մամիկոնեան կրնայ արդէն սպաննել նկատուիլ, և Մեհրուստան Արծրունի արդէն հատուածեալ Պարսից կողմը:

Ըստ Բուզանդայ. նախ Ներսէս մեծապայծառ փառօր մեծարուեցաւ (Բուզ. 81), Վաղէսի տղան բժշկելու հրաւիրուեցաւ, և Ներսէս ուղղափառ դաւանութիւն ընդունելը պայման դրաւ. այլ տղան մեռաւ (81--90), և Վաղէս աքսորեց զՆերսէս (91), իսկ նախարարները պատուով Արշակի դարձուց (92), Ներսէս 9 տարի մնաց յաքսոր (96), և Վաղէսի մահուանէ յետոյ աքսորէ ազատուեցաւ և Հայաստան դարձաւ (112): Արշակ Ներսէսի աքսորուելուն վրէժը լուծելու համար Վասակ զօրավարը լղեց, որ 6 տարի Յունաց գաւառները աւերեց (107):

Ըստ պատմչին վարուց. Վաղէս նախ Ներսէսը մե-

Ճարեց և Կոստանդնուպոլսոյ պատրիարքէն ալ վեր նըստեցուց (Վարք 53), այլ Տրայիանոս որդւոյն մահուան պատճառ Ներսէսը նկատելով նախ բանտարկեց և մեռցնել ուզեց (56), բայց իւր իշխաններուն միջամտութեամբ ուրիշ 72 եկեղեցականաց հետ աքսորեց (57), ուր մնաց Ներսէս 9 ամիս (58), Վաղէս նախարարները պատուով դարձուց (59), այլ Արշակ Վասակը Յունաց վրայ զրկեց, որ յաղթական հասաւ մինչև Խուլսուսոլիս (60) այժմ Իււկիւտար, Վաղէս փախաւ և Նեքտառիոս պատրիարք հաշտութիւն խօսեցաւ, և Վասակ 8 ամիս արշաւանքէ յետոյ դարձաւ (61), Վաղէս մեռաւ, և Ներսէս ազատեցաւ, և Կոստանդնուպոլսոյ ժողովոյն ալ ներկայ լինելէ յետոյ դարձաւ (62):

Ըստ Խորենացւոյ. Ներսէս առաջին զեսպանութիւն մը կատարեց Վաղէնտիանոսի օրով, շատ պատիւ գտաւ, և Ողոմպիագոյն և պատանդները բերելով դարձաւ (Խոր. 46): Երկրորդ զեսպանութիւն ալ ունեցաւ Վաղէսի օրով, Պասլն ու նախարարաց զաւակները պատանդ տարաւ (66), բայց Վաղէս երեսն ալ տեսնել չուզեց և աքսորեց (68): Մակեդոն պատրիարք միջամտել առաջարկեց՝ եթէ հոգեմարտութեան համաձայնին. Ներսէս մերժեց, այլ Պասլ և պատանդներ համաձայնեցան և ազատուեցան և դարձան (70): Ներսէս ազատուեցաւ Վաղէսի մեռնելէն ետքը, Կոստանդնուպոլսոյ ժողովոյն ներկայ եղաւ (76), և Արշակայ ձերբակալութենէ ետքը, Թէոդոսի հրամանով Պասլը թագաւորեցուց և ի միասին տարաւ (84):

Այդ երեք տեսակ պատմութիւններն ալ իբր նախնական համարուելուն զատ-զատ քաղեցինք, և յայտնի է որ իբրբու հետ չեն կրնար համաձայնիլ, այլ և իւրաքանչիւրը իւր մէջ այնպիսի ժամանակագրական սխալներ կը պարունակէ, որ առանց բացատրելու ալ ցարգ յառաջ բեր

ըուածներէն կը հասկացուի: Մեր պատմութիւն իւր իրական կերպարանին վերածելու համար ընդունելի և անընդունելի պարագաները զատեմք:

Ներսէս կաթողիկոսութեան մէջ երկու զեսպանութիւն ըրած չէ: Առաջին զեսպանութիւն ըսուածը երիտասարդութեան ատեն Կոստանդնուպոլիս գտնուելն է, ոչ Վաղէնտիանոս այլ Կոստանդ կայսեր ժամանակ, երբ իբր պալատական Ողոմպիագոյն ընկերացաւ և պատանդները դարձուց 350-ին: Բուն և միակ զեսպանութիւնը տեղի ունեցած է 364-ին համաձայն ամեն ազգային պատմագրաց, թէպէտ արտաքինք լիշտակութիւն չընեն: Թէպէտ զեսպանութեամբ եկող անձի մը աքսորուելը քաղաքական օրինաց համաձայն չէ, բայց Վաղէսի պէս կայսրէ մը ապօրէն գործ մըն ալ կրնայ սպասուել: Միայն Մակեդոն պատրիարքի միջամտութիւնը ժամանակագրութեան չյարմարիբ, զի Մակեդոն 360-ին պատրիարքութենէ ելած էր և 361-ին կամ քիչ ետքը մեռած և Վաղէսի հետ ժամանակակից չեղաւ: Կրնայ ընդունուել թէ Վաղէս Հայոց զեսպանութեան գլուխը հոգևոր պետ մը տեսնելով, առաջ պատուով, յետոյ երկիւղիւ, զայն իւր կրօնական տեսութեանց կողմը շահիլ ուզած ըլլայ, և պահ մը աքսորի պէս զայն հեռացուցած ըլլայ: Այլ Վաղէսի Տրայիանոս տղուն հիւանդութեան և մահուան միջադէպները պատմական չեն. Նազիանզացւոյն գրածին համեմատ նմանօրինակ դէպք մը տեղի ունեցաւ ի Կեսարիա Վաղէսի և Բարսեղի մէջ, Վաղէնտիանոս-Գաղատոս որդւոյն հիւանդութեան և մահուան առթիւ, այլ Բարսեղ աքսորի վճիւր ընդունելէն ետքը աքսորէ ազատեցաւ (Fialon 167, Guérin Բ. 1172, Petin Ա. 369):

Ինը տարի աքսոր մնալը արդէն ոմանց մէջ փոխուած և ինը ամիս ըսուած է, և կերևի թէ պարզ

գրչուժեան սխալով մը *ամիս* եղած է *ամն*. և եթէ մինչև Վաղէսի մահը աքսոր մնացած ըսեմք կը հասնիմք 379 ին, Կոստանդնուպոլսոյ ժողովն ալ տեղի ունեցաւ 381-ին, մինչ Ներսէսի մահը 373-էն յետոյ թողուլ անհնար է. հետեւեալ աչգ պատմուած պարագաները պէտք է բոլորովին պատմութենէ դուրս թողուլ: Վասակի հրամանատարութեամբ կատարուած Յունաստանի արշաւանքը հաւանական չկրնար լինել, քանի որ Արշակ Յունաց զէմ թշնամութեան նպատակ չունէր, և Ամմիանոս ալ Արշակը «բարեկամ մեր միշտ և հաւատարիմ» կը ճանչնայ (Ամմ. 241): Դեսպանութեան հետեւանաց վրայ անորոշ են հասած տեղեկութիւնք. զի գործն ալ անորոշ կերպարան ունեցած է: Վաղէս խոստացած է բերանով, այլ իրօք ոչինչ կատարած: Խոստմանց վտահանալով Հայք Պարսից հետ թըշնամացած են, և Յոյներէն օգնութիւն չհասնելուն համար մենակ և տկար մնացած, որով Արշակայ եղերական վախճանին պատճառ եղած են Յունաց սուտ խոստումները ինչպէս պիտի տեսնեմք:

Պապի պատանդ տարուելուն պարագայն կրնայ ընդունուիլ, իբրև հաւատարմութեան նշան և իբրև երաշխաւորութիւն Արշակայ կողմանէ, և Պապին Կոստանդնուպոլսոյ մէջ չպահուիլը իբրև ազատութիւն նկատուած, զի Պապ կայսեր հրամանով Նէոկեսարիա զըրկուեցաւ (Ամմ. 283): Մեր տուած թուականները կը ստիպեն ընդունել թէ Պապ որդի է Արշակայ և Ողոմպիադայ ծնեալ 351-ին, և ոչ Արշակայ և Փառանձեմայ զի յարբունս հասեալ պատանի էր երբ պատանդ տարուեցաւ (Բուզ. 126, Խոր. 66) ինչպէս ըսինք 364-ին, Վաղէսի թագաւորելուն առաջին տարին: Վարուց պատմիչը Պապի եղբայր մըն ալ կուտայ Տրգատ անունով (Վարք 50), և թերևս այս Տրգատն է որ ի վերջոյ

Փառանձեմի հետ կը գտնուի. իսկ Պապին ու Տրգատին Փառանձեմի զաւակ համարուիլը պղտիկուց անոր խնամոց ներքև մեծցած ըլլալնէն յառաջ եկած է, և մօրուն մօր տեղ անցած է:

Այդ խորհրդածութիւններէ ետև յապտմական պարագայից քաղուածը: Արշակ Յունաց հետ բարեկամութիւնը պնդելու հարկ կը տեսնէ. Ներսէսի հետ կը հաշտուի, նորա ձեռօք նախարարներու հետ ալ կը համաձայնի, Ներսէսը գեսպան կը զրկէ և Պապը պատանդ. Վաղէս գեսպանութիւնը կընդունի սին խոստանդ. Վաղէս գեսպանութիւնը 364-ին: Վաղէս Ներսէսի հետ կրօնական խնդրոց ալ կը մտնէ, Ներսէսի անհամաձայնութենէն կը ցաւի, վայրկեան մը բռնութիւն ալ փորձել կը խորհի, բայց վերջապէս Ներսէսը կը զարձնէ խոստումներով, և Պապին բնակութեան տեղ կը սահմանէ Նէոկեսարիա (այժմ Նիկսար) քաղաքը: Այս վերջին գէպերն ալ 365-ին: Ներսէս կը դառնայ 9 ամիս բացակայութենէ յետոյ:

8. ԲԱՅԱԿԱՅՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՅԻՆ

Ներսէսի բացակայութեան ատեն տեղապահութեան պաշտօնը վարողն եղած է Խաղ Կարնեցին, որ յառաջ սարկաւագ էր միայն. և հետզհետէ Բագրևանդայ և Արշարունեաց եպիսկոպոսութեան էր հասած (Խոր. 72, Բուզ. 108): Խաղ կատարելապէս Ներսէսի ընթացքին հետևող սկսած էր համարձակութեամբ յանդիմանել Արշակայ ապօրէն գործերը: Արշակ անոր վրայ կաշառքն ալ փորձեց (Բուզ. 110), սպառնալիքն ալ, բայց Խաղ չփոխուեցաւ: Մինչև իսկ քարկոծման փորձ եղաւ Խաղի վրայ, բայց Ապահունեաց նախարարագուն երիտազայ վրայ, բայց Ապահունեաց նախարարագուն երիտազայի սարգներ, Խաղայ դստեր տագրներ, պաշտպան կանգ-

նեցան, և զինքը վտանգէ ազատելով իրենց գաւառը տարին (Խոր. 74):

Խաղայ համար կը պատմուի թէ իւր այդչափ անձնուրաց և նախանձախնդիր աշխատութեանց մէջ «պըճնող առ հանդերձս և ձիասէր» էր (Խոր. 72), առանց սրբութեան և սքանչելագործութեան համբաւը կորուսանելու (Խոր. 72, Բուզ. 111): Իւր հակառակորդներ առիթ առին աստի զինքը պարսաւել, այլ սուրբը տեղի չտալու համար տարազը փոխեց, խարազ հագաւ և էշով կը ճանպորդէր: Մեք միայն դիտել կուտամք թէ եկեղեցականաց անշուք տարազը և խստակրօն կեանքը, յատուկ էր ճգնաւորական կենաց հետևողներուն, իսկ աշխարհիկ և ամուսնաւոր եկեղեցականներու, որպիսի ոք էր և Խաղ, արգելեալ չէր վայելչութեան սահմանին մէջ զարդեր և զիւրութիւններ գործածել:

Ներսէսի բացակայութեան Արշակայ և Խաղայ մէջ խնդրոյ նիւթ եղող գործերուն կարգին կը լիշուի Կամսարականաց կոտորածը: Արշակ նենգութեամբ հացկերոյթի կը հրաւիրէ Արմաւիր, բոլոր Արշաւիրի տունը, և ամենն ալ այնտեղ ջարդել կուտայ, բաց ի Սպանդարատէ, որ ըստ ոմանց Արշակունեաց փեսայ էր (Խոր. 70), և ըստ այլոց փոքրիկ մանուկ էր (Բուզ. 133): Կամսարականաց մարմիններու թաղումն ալ զլացաւ Արշակ, մինչև իսկ նոյն տոհմին ծառաներէն քանի հատը, որք իրենց տէրերուն մարմինները ի ծածուկ թաղած էին, Արշակայ հրամանով կախողան հանուեցան (Խոր. 74): Կամսարական Ներսէս ալ զինքն ալ ևս ապահով չզգալուն տունով տեղով Յունաստան փախաւ:

Կամսարականաց կոտորածը յատկապէս կը լիշուի, ոչ իբրև միակ, այլ իբր ակելի նշանաւոր, որովհետև ուրիշ նախարարութեանց մէջ ալ կոտորածներ ընել

տուած էր Արշակ հաշտութենէ առաջ թշնամութեանց վրէժխնդրութեան համար (Խոր. 70, Բուզ. 133): Կամսարականաց համար կը լիշուի նաև թէ անոնց Երուանդաշատ քաղաքը և Արտագերից բերդը և առատ ստացուածքն եղան կոտորածին պատճառը (Խոր. 70): Արշակ կոտորածէն ետքը անոնք գրաւեց, Արտագերից բերդը ամրացնել և համբարակել տուաւ, սակայն չեաց նոյն բերդին մէջ լրացաւ Արշակայ տան աղէտքը:

Նշանաւորագոյն է Արշակաւանի պատմութիւնը, զոր Արշակ հիմնեց իւր անունով Կոգովիտ (այժմ Բայազիդ) գաւառին մէջ, Մասիս լեռան ստորոտը: Նոր դաստակերտը շուտով բազմամարդացնելու համար Արշակ զայն ապաստանի քաղաք հռչակեց սմեն տեսակ ոճրագործաց առանց բացառութեան: Հետևանքն եղաւ երկրին մէջ եղեռանց բազմանալը և անպատիժ մնալը: Ինչոր աշխարհը, մեծամեծք և փոքունք սկսան բողոքել Արշակայ դէմ. և Խաղ արձագանք եղաւ այդ գանգատանաց Արշակայ առջև, և չուզեց Արշակաւանի մէջ եկեղեցի օծել, պատճառելով թէ իբր պարզ տեղապահ մը անձեռնհաս է այդ գործը կատարել: Աստի գլխաւորապէս Խաղայ առաջարկուած կաշառքները և սպաննացուած քարկոծումը (Բուզ. 110):

9. ԵՐԿՐԻՆ ՎԻՃԱԿԸ

Այդ միջոցին Ներսէս Բիւզանդիոնէ դարձաւ և ամեն խրատ և յորդոր գործածեց, որպէս զի Արշակաւանի կացութիւնը փոխել տայ և օրինաւոր քաղաքի դիրքին մտցնէ, և Արշակաւանի բնակիչներուն ամեն օրէնքէ և պատիժէ ազատ լինելուն արտօնութիւնը ջնջէ: Այլ անհնար եղաւ Արշակը համոզել և Արշակաւան կործանեցաւ, Արշակայ բաղդն ալ ի միասին վտան-

գուեցաւ և Ներսէսի անիծակուր սպառնալիքներ կատարուեցան: Ներսէսի յուսաբեկ և սպառնալից վերջին անգամ Արշակէ զատուելէն երեք օր յետոյ, չարակեղ կամ ժանգ կոչուած ժանտախտը սկսաւ Արշակաւանի մէջ ճարակել և երեք օրուան մէջ 18,000 կամ 20,000 երգ (Վարք 65, Բուգ. 115), որ է իբր 70—80,000 հոգի սպաննեց և քաղաքը «քանդեցաւ» (Բուգ. 115), որ Վարքին մէջ երկրաշարժի պարտգայն աւելցնելու առիթ եղած կերևի (Վարք 65): Իսկ ըստ Խորենացոյ նախարարք յարձակեցան և Արշակաւանը կործանեցին (Խոր. 60): Գուցէ թշնամական փորձ մըն ալ եղաւ նախարարաց կողմանէ, այլ առաւել հաւանական է ժանտախտը այսպիսի տալիանեալ և խառնակեաց քաղաքի մէջ: Խորենացոյ պատմութեան մէջ գերեաց մանուկները ազատելու մարդասիրական գործը կը վերագրուի Ներսէսի, որ հաստատապէս ժանտախտի առթին մէջ ալ որբերուն վրայ կրնայ գործադրուած ըլլալ:

Արշակաւանի շինութեան և կործանման պարագայք անորոշ են պատմութեանց մէջ և ըստ դիպաց յետ կամ յառաջ գետեղուած են. բայց պատմուած պարագայք գայն Ներսէսի բացակայութեան միջոցին կը կապեն: Միւս կողմանէ Արշակաւանի կեանքը երկար չեղաւ, եթէ մէջը եկեղեցի օծելու իսկ ժամանակ չեղաւ: Բնակչաց թուոյն քիչ ժամանակի մէջ շատցած ըլլալը, պատժական օրէնքներուն իսպառ դադարման բնական հետևանքն է: Հետևաբար 364-է 365, կամ առ առաւելն 364-է 366 տարիներու մէջ սկսած և վերջացած է չարագուշակ Արշակաւանը, որոյ անունը մինչև այսօր մեր հասարակ խօսից մէջ Սողոմ. Գոմորի համանշանակ իմաստով կը գործածուի:

Արշակաւանի պատճառով թագաւորի և կաթողիկոսի և նախարարներու մէջ ծագած խնդիրը երկարա-

տու չեղաւ, զի հասարակաց վտանգը ամենքը համաձայնելու կը ստիպէր: Եապուհ միջոց մը հանդարտ մնալէ յետոյ նորէն Հայաստանը գրաւելու փորձերու ձեռնարկեց. «նախ բազմադիմի արուեստիւք նենգութեան, ապա թեթևակի վնասիւք զընդդիմութիւն համօրէն ազգին ընկճել փորձէր. և ի նախարարաց և ի մեծամեծաց զոմանս հրապուրանօք և զայլս յեղակարծում յարձակմամբ լինքն նուաճէր» (Ամմ. 282): Արշակ և նախարարք չէին կրնար հարկաւ սիրով մտնել Պարսից լուծին ներքև, Ներսէս իւր դեսպանութենէն լոկ խոստման խօսքեր բերեր էր, հարկ եղաւ պաշտպանողական պատրաստութիւններու ձեռնարկել, Վասակ սպարապետ էր, այլ Ներսէս էր ամենուն համաձայնութեան և քաջալերութեան կեդրոնն ու աղբիւրը:

Յիշեցինք արդէն Մեհրուժանայ և Վահանայ սրբտով ու հաւատքով Պարսից կողմն անցնելը: Երկու ուրացեալ հայ նախարարներ Ամմիանոս ալ կը լիջէ Կիւլաքս և Արտաւան անունով: Թէպէտ և մեր պատմագիրներ ուրացեալները իրենց հին անուններով սովոր են լիշել, սակայն հարկաւ կրօնափոխութեան հետ անունափոխութիւն ալ տեղի ունեցած պէտք էր ըլլար: Ամմիանոս կգրէ, թէ «զմին ի սոցանէ յառաջագոյն հազարապետ աշխարհին և զմիւսն սպարապետ զօրաց լեալ ասեն» (Ամմ. 282), որ Արծրունեաց և Մամիկոնեանց բնական պաշտօններուն կը համապատասխանէ:

Պարսից և Հայոց պատերազմներուն նկատմամբ չեմք կարող հետևել Բուզանդայ ղիցաբանութեանց. ոչ պատերազմաց թիւր, ոչ բանակաց բազմութիւնը, և ոչ կոտորածոց քանակութիւնը ճշդելու չեմք զբաղիր, մանաւանդ որ նիւթն ալ մեր նպատակէն դուրս է: Յիշեմք միայն Գարանալի գաւառին Հանի բերդին (այժմ Կամախ) թագաւորական գերեզմաններուն բռնաբա-

րուիլը, և կողոպտուած ոսկրներուն Վասակայ ձեռօք ետ առնուիլը, այլ հեթանոս և քրիստոնեայ թագաւորաց ոսկրներուն խառնուած լինելուն համար Վաղարշապատու սրբավայրին մէջ չթաղուիլը, այլ Արագածոտն գաւառի Աղցք գիւղը յատուկ տեղ մը թաղուիլը (Բուզ. 148, Խոր. 60), թերևս Տիրանայ ոսկերաց մօտ, որ սպանուած էր ի Կուաշ, նոյն Արագածոտն գաւառի մէջ:

Պատերազմները երկարեցան, և հակառակ Ներսէսի ջանքերուն, նախարարք՝ իբր թէ յոգնած և տկարացած, այլ իրօք Պարսից նենգութենէն շահուելով, չեն ուզեր այլ ևս պատերազմի ելնել: Այդ շարժման գլուխ կը կանգնեն Աղձնեայ և Գուգարաց բռնիներ, որոնք Խոսրով Կոտակի ատենն ալ 337-ին, նոյնպէս թագաւորին դէմ ելած էին: Ըստ պատմութեան 34 տարի է որ պատերազմը կը շարունակէ (Բուզ. 163), և նախարարաց բերնով կըսուի թէ 30 տարի է որ Արշակ թագաւորած է, և բնաւ տարի մը առանց պատերազմի անցած չէ (Բուզ. 165): Յիշուած թիւերը ճիշդ չեն, այլ Ներսէսի 34 և Արշակայ 30 ենթադրեալ տարիներու հետ կը համաձայնին, իսկ 30 տարի պատերազմ ենթադրելու համար, պէտք է 337-է սկսել, որ յունապարսիկ 40-ամեայ խաղաղութեան լրանալուն տարին, և ճիշդ կը հասնի Արշակայ վերջին այսինքն 367 տարին:

Նախարարաց ներքին միտումն է քաղաքականութիւնը փոխել և Պարսից հովանաւորութեան ներքև մտնելով խաղաղութեամբ ապրել: Յովհաննոսի դաշամբ Յոյներ պաշտօնապէս ձեռնթափ եղած էին, Վաղէսէ խոստացուած օգնութիւններ չէին հասներ, Հայք որչափ ալ ըստ պատմութեան յաղթականք, այլ հնար չէր որ մեծամեծ կորուստներ ունեցած չլինէին: Նախարարք այդ իրենց կարծիքը կը ներկայեն Ներսէսի:

որ արքունեաց մէջ հայրապետական ազդեցիկ դերը կը վարէր ըստ ամենայնի. Ներսէս չհաւաներ. և կրօնական ու քաղաքական, մարդասիրական և երախտագիտական ամեն փաստեր կը գործածէ նախարարները իրենց խորհուրդէն ետ կեցնելու, բայց ի զուր. բռնչկներ և իրենց համախոհներ գունգերնին կառնեն և կը ցրուին (Բուզ. 166):

Պարսից թագաւորն ալ, որուն նախարարաց հետ համամտութիւնը ակներև է, թշնամութիւնները կը գողբեցնէ, և Ալանաոգան Պահլաւունոյն ձեռօք (Խոր. 76) սիրոյ և պատուոյ առաջարկութիւններ կընէ, և կը յորդորէ որ Արշակ անձամբ իրեն գայ, և երկու կողմերու պատուաւոր կերպով խաղաղութիւն կնքեն ուհաստատեն: Արշակ, հարկաւ փոքրիշատէ գործերուն ընթացքին տեղեակ, կը հրաժարի անձամբ երթալ, այլ վերջապէս «թէ կամաւ կամաւ և թէ ոչ կամաւ» (Բուզ. 168) կը ստիպուի հաւանիլ և Վասակ սպարապետի հետ կը ներկայանայ Շապուհին: Բայց հազիւ թէ կը հասնի գործոց ընթացքը կը փոխուի, և Արշակ իբր անհաւատաբար կը մեղադրուի: Շապուհ, ըստ զրուցաց, մոգերու խորհրդով հայ հողի և հայ ջուրի հմայական փորձ մըն ալ կընէ Արշակայ ապագայ տրամադրութիւնները իմանալու համար (Բուզ. 169—172), և վերջապէս երկաթեայ (Բուզ. 172, Խոր. 80) կամ թէ արծաթեայ (Ա.մ.մ. 282) շղթաներով կը բանտարկէ Արշակը Անյուշ բերդին մէջ, և աչուրներն ալ կուրցնել կուտայ (Ա.մ.մ. 282): Իսկ Վասակ Մամիկոնեան սպարապետ դատաստանի կենթարկուի, և իւր քաջութեան գործերը համարձակ պաշտպանելոյն վրայ մորթեգերծ կը սպանուի, և խոտով լեցուն մորթը Արշակին կը զրկուի Անյուշ բերդի բանտին մէջ (Բուզ. 173): Այդ ամենը կը կատարուի յամին 368:

Նախարարք որք կուսակից եղած էին պարսկական բարեկամութեան, շուտեցան այդ անակնկալ նենգութեան վրայ, մանաւանդ որ միևնոյն ատեն Շապուհ Տրուէր զրկած էր որ թագուհին և նախարարներուն կիները Պարսկաստան երթան (Խոր. 80): Շապուհի զրկած հրաւիրակները նախարարներուն կողմանէ մերժուեցան, և Սուշեղ Մամիկանեան, Վասակայ որդին՝ հօրը տեղ սպարապետ հռչակուեցաւ և Ներսէս ալ իւր ազգեցութիւնը ձեռք առաւ (Վարք 67): Փառանձեմ թագուհի Տրդատ տղայով և զանձերով Արտազերից բերդին մէջ ամրացաւ, և Ներսէսի (Խոր. 84) և Սուշեղի (Բուզ. 178) հարկաւ անուններով, որովհետեւ երկուքին ալ երկիրը թողուլ և երթալը ենթադրելի չէ —, պատգամաւ որութիւն չղուեցաւ Վաղէսի որ Պապ արքայորդին թագաւոր զրկէ հանգերձ զօրաւոր օգնութեամբ: Վաղէս միայն Պապը զրկեց Տերենտիոս զօրավարին ընկերակցութեամբ, որպէս զի Հայոց պետ լինի, այլ թագաւորական ձեւեր չառնու, որպէս զի ինքն Յովիանոսի գաշանց հակառակ միջամտութիւն ըրած չերևի (Ամմ. 283):

Այդ միջոցին Շապուհ իւր կողմանէ Հայաստանի վրայ լիազօր մարզպան և հրամանատար անուաներ էր Գիւլաքս և Արտաւան ուրացեալները, որք սկսան մի կողմանէ երկիրը աւերել և միւս կողմանէ Արտազերից բերդը պաշարմամբ նեղել (Ամմ. 282): Ըստ Խորենացւոյ Շապուհի անուանած հրամանատարները Մեհրուժան և Վահան ուրացեալներն էին (Խոր. 80), իսկ ըստ Բուզանդայ Հեկ և Կարէն անունով նախարարներ եղած են (Բուզ. 174), և անտարակոյս է որ տարբեր անուններու ներքեւ միևնոյն և ծանօթ երկու ուրացեալ նախարարները կը գտնուին: Իրաւ անգամ մը Բուզանդ անցողաբար չորս անունները միանգամայն կը նշանակէ իբր գատ-գատ անձեր (Բուզ. 182), այլ տեղ մը միայն

այլդած շիոթութիւնը չկրնար պատմութեան ընթացքին ցուցած և պահանջած ստուգութիւնը խախտել:

Այդ կացութենէ յառաջ եկած ներհակընդդէմ գործողութիւնք սկսան երկիրը խալառ աւերել և կործանել, որովհետեւ երկու կողմերն ալ վնասելու մտադիր էին, առանց բուն նպատակը զօրացնելու: Այդ վտանգալից պարագաներու մէջ Ներսէս քաշուած չէր մնար, այլ Պարսից դէմ ելնող ազգին գլուխ կանգնած էր, «վերակացու և խրատատու, կարգիչ և առաջնորդ... իմաստութեան իրաց առաջնորդ, հանապազ կցորդ հոգոց, բարձիչ վշտաց աղօթիւք իւրովք, և յամենայնի ամենայնիւ երբէք հայր երևեալ» (Բուզ. 190):

Ամմիանոս կը պատմէ թէ Գիւլաքս և Արտաւան Արտազերից (Artogerassa) բերդին պաշարման ատեն, ուզեցին խաբէութեամբ Հայոց թագուհին գրաւել, այլ տեսակցութեան ատեն իրենք գրաւուեցան անոր լեզուէն, գաղտնի դաւով Պարսիկները ջարդել տուին և գացին Պապին հետ միացան և 5 ամիս հաւատարմութեամբ անոր օգնեցին, բայց Շապուհ նենգաւոր բանակցութեամբ Պապայ միտքը պղտորեց, և Պապ երկուքն ալ սպաննեց և գլուխները Շապուհի չղեց բարեկամութիւն ստանալու յուսով (Ամմ. 283—284): Մեր պատմագիրներ Մեհրուժանին և Վահանին դարձի գալը բնաւ չեն յիշեր, ընդհակառակն կը պատմեն թէ Պարսից ծառայութեան մէջ գտնուած ատենին Հայերէն սպանուեցան: Քանի որ պատահարը պարզապէս ներքին է, և Ամմիանոս հեռուէ հեռու լսածները գրելը կը խոստովանի (Ամմ. 328), և քանի որ Գիւլաքսի և Արտաւանի միևնոյն Մեհրուժանն ու Վահանը լինելը կընդունիմք, կը նախադասեմք անոնց վախճանին նկատմամբ ազգային աւանդութիւնը պահել, քան օտար պատմիչին լսած գրոյցը:

Արշակայ ձերբակալութեան տարին, այսինքն 368-ին կը սկսին շփոթութիւններ, պատերազմներ, պաշարումներ, որք կը գրաւեն նաև բովանդակ 369 տարուայ ամառան ամիսներ որք այսպիսի գործերուն սովորական ժամանակն են: Յոյներ եղելութեանց չեն մասնակցեր, բայց տեսնելով Պարսից զօրանալը Արինթէ (Ամմ. 284) կամ Ագգէ (Բուզ. 184, Խոր. 86) զօրավարին հրամանատարութեամբ հսկողութեան բանակ մը կը հանեն: Նոր տարույն, այսինքն 370-ին, Շապուհ անձամբ պատերազմին գլուխը կանցնի, Պապը 5 ամիս Խաղտեաց կողմերը կը հալածէ, երկրին մեծ մասը և գլխաւոր տեղերը կաւերէ ու կաւարէ, կը գերէ ու կը գերփէ, Արտաշատ, Վաղարշապատ, Երուանդաշատ, Հարենաւան, Հարիշատ, Վան և Նախիջևան կոխան կըլլան (Բուզ. 177, Խոր. 80): Արտագերից բերդն ալ կառնուի, թագուհին ու գանձեր գերի կը տարուին: Ամմիանոս կը գրէ թէ Արտագերք բուռն զօրութեամբ և փոխադարձ յաղթութիւններով առնուեցաւ (Ամմ. 284), մինչ Խորենացին կըսէ թէ անձնատուր եղան ի կամաց և ոչ ի բռնութենէ (Խոր. 80), իսկ Բուզանդ կը գրէ թէ 11,000 բերդականներ և 6,000 բնակիչներ ամսուան մը մէջ հիւանդութեամբ մեռան (բուզ. 175): Երեքին գրածներն ալ կրնան ստույգ ըլլալ և զերար լրացնել: Իսկ պաշարման տևողութիւնը 14 ամիս կը դնէ Բուզանդ (Բուզ. 175), և պատմութիւնը դժուարութիւն չկրեր այդ տևողութիւնը ընդունել, զի աւելի ալ տեւելու միջոց կայ մինչև 370 տարին:

Ասկէ ետքը Շապուհ բանակցութեան մտաւ Յոյներուն հետ, և երբ չյաջողեցաւ, նոր գարնան պատերազմի համար շրջակայ ազգերն ալ նիզակակցութեան կանչեց: Յոյներն ալ պարտաւորուեցան իրենց բանակը զօրացնել Տրայխանոս և Վատամար զօրավարներու գուն-

դերով, Հայերն ալ իրենց ոյժերը ժողովեցին Մուշեղայ հրամանատարութեամբ և Պապայ ներկայութեամբ: Յոյներ պահ մը մեծ պատերազմէ զգուշացան, Հայերուն թողլով մասնաւոր պատերազմներով ատեն վաստկել, ալ վերջապէս անհնար եղաւ խուսափել, և 371 տարուայ ամառուան մէջ կամ վերջ տեղի ունեցաւ Ձիրաւայ մեծ ճակատամարտը (Խոր. 86), որ կը կոչուի ևս Բագաւանայ կամ Բագրևանդայ պատերազմ (Բուզ. 196), և նոյն իսկ լատին պատմիչն ալ գիտէ Բագաւանայ (Vagabanta) անունը (Ամմ. 306):

Այս պատերազմին ատենն է Ներսէսի հրաշալի գործակցութիւնը, զոր ամբարտակից զինուորական դասուն» բացատրութեամբ յաւերժացուցած է շարականը: Ներսէսն է միաբանութեան կեդրոնը և քաջալերութեան հոգին, կը քարոզէ բոլոր բանակներուն, կորհնէ զօրավարաց զէնքերը, կորհնէ զինուորաց եռանդը, և Պապին հետ կը բարձրանայ Նպատ լերան վրայ (Ալաշկերտի Ս. Յովհաննէս վանքին գագաթը), Բագաւանայ հանդէպ, ուր տեղէն կը դիտէ «Ձիրաւայ (այժմ Դիագինի) ընդարձակ դաշտը և անոր մէջ գործող բանակները, և կաղօթէ անխոնարհելի բազկատարածութեամբ ըստ Մովսիսի՝ Աստուծոյ ժողովրդեան յաղթութեան համար: Սքանչելի աղօթք մը կը դնէ պատմագիրը Ս. Ներսէսի բերանը (Վարք 74—78), արժանի հաւատացելոց սովորական աղօթք լինելու: Ներսէսի աղօթքը, Մուշեղայ քաջութիւնը, զինուորաց եռանդը, և Յունաց զօրաւոր օգնութիւնը, ոչ միայն այն օրուան յաղթութիւնը պատրաստեցին, ալ և շփոթութեանց վերջ դրին և խաղաղութեան օրեր բերին: «Յայնմհետէ խաղաղացաւ երկիրն ընդ ձեռամբ Պապայ նուաճեալ» (Խոր. 90). որովհետև զազարեաց պատերազմն ի կողմանցն Պարսից և յապահովեցան իրք ճակատուն յայնմ կողմանէ»

(Բուզ. 213): Լատին պատմիչն կը լաւելու թէ երկուց կողմանց հաճութեա՛ր զինադադար ալ կ'նքուեցաւ, թէպէտ հաստատուն խաղաղութեան դաշնադրութիւն չեղաւ (Ամմ. 306):

Իրպուածոց շարքը չընդհատելու համար գերելոց բազմը զանց ըրինք պատմել: Մեհրուժան և Վահան Հայոց երկրին վրայ իշխանութիւն վարած առեմնին, յատուկ մտադրութիւն դարձուցած էին եպիսկոպոսներ և քահանաներ ձերբախալելու և Պարսկաստան լղելու, և յունարէն և ասորերէն քրիստոնէական գիրքերը այրելու (Խոր. 82), բայց ասկէ աւելի նախարարաց կիները բռնելով բերդերու մէջ կը լեցնէին, անոնց այրերը հնազանդութեան ստիպելու համար: Միւս կողմանէ ալ կը ստիպէին այդ կիները քրիստոնէութիւնը ուրանալ և իրենց կամքին ծառայել, և երբ այդ արխախրտ կիներ չէին զիջաներ, չարաչար տանջանքներով կը նեղէին և կը մեռցնէին (Բուզ. 183), և կենդանի կամ մեռած բերդերէն վար կը կախէին (Խոր. 84): Մամիկոնեան Համազասպուհուոյ վկայութիւնը մանրամասնօրէն պատմուած է (Բուզ. 183):

Աւերեալ քաղաքներէն հաւաքուած գերիներ, Բուզանդայ թիւերով կը լինին 101,000 տուն Հայեր 95,000 տուն նախկին Հրէաներ (Բուզ. 176—178), որք բովանդակ Պարսկաստան տարուեցան: Հրէից թիւը կամ չափազանցուած է կամ թէ գրչի սխալով աճած է, բայց Հայոց թիւը անհնար չէ: Այդ գերիներն ալ մասամբ կտորուեցան և մասամբ հեռու տեղեր տքտրուեցան իրենց հաւատոց հաստատութեան համար: Ասոնց մէջէն Արտաշատ քաղաքի Զուլթա քահանային վկայութիւնը առանձինն պատմուած է: Նորա մազերուն ճերմակ և մօրուքին տակաւին սև լինելը կախարդական նշան երևցաւ Պարսից աչքին, իսկ ժողովուրդը

հաւատոց հաստատութեան յորդորելը լանցանք սեպուեցաւ: Անոր համար ուզեցին առաջ քահանայն հեռացնել (Բուզ. 177), այլ երբ իւր ժողովուրդէն բաժնուիլ չուզեց, դատարանի առջև հանեցին: Զուլթա մազերուն և մօրուքին տարբեր գոյները բացատրելու համար ըսաւ, թէ մազերը մօրուքէն գոնէ 15 տարեկան աւելի ծեր են, բայց ասով քրիստոնէութիւնը ուրանալու ստիպումէն չազատուեցաւ, և յանձն չտուներուն վրայ գըլխատմամբ մարտիրոսացաւ (Բուզ. 180, Խոր. 82):

Իսկ Արշակ թագաւոր Անյուշ բերդին մէջ անձնասպան եղաւ, գործուած անգթութեանց զոյժէն շուարեալ (Խոր. 82): Իրաստամատ ներքինի, նախկին հաւատարիմն Արշակայ, և յետոյ սիրելի եղած Շապուհ, իբր անօրինակ շնորհ մը հրաման ընդունեցաւ օր մը ամբողջ մխիթարել Արշակը կերակուրներով և զարդարանքներով Անյուշ բերդի անյուր տառապանքներուն մէջ, և նոյն օրն էր որ կերակուրի դանակով մը անձնասպան եղաւ Արշակ, հարկաւ Իրաստամատից լսելով եղելութեանց պատմութիւնը, որովհետև Անյուշի բանտին մէջ լուր անգամ առնուլ անհնար էր: Իրաստամատ ինքն ալ անձնասպան եղաւ իւր կենաց յայտնի վտանգը տեսնելով: Այսպէս Բուզանդ (Բուզ. 210—213): Այլ Լատին պատմիչը Արշակայ համար կը գրէ թէ «կոտամահ անկաւ պատժական երկաթով» (Ամմ. 282): Բայց Արշակայ անձնասպան մահը շատ ծանօթ է մերայնոց, և սաւուղական անհնազանդութեան համար սաւուղաբար մեռնելը, իբր աստուածային պատիժ կը մեկնեն (Վարք 65), մինչ լատին պատմագրին խօսքն ալ շատ որոշ չէ, գրածն ալ հեռուէ հեռու լսածն է: Այսու հանդերձ մերայինք միշտ խիստ են իրենց պատմութիւններուն և դատաստաններուն մէջ թագաւորաց դէմ, և Ամմիանոսի պատմածը տւելի յար-

մար է պատմութեան ընթացքին: Սողոմենոս յոյն պատմագիրն ալ յալտնասլէս կրօէ թէ Արշակ հաւատոյ նահատակ եղաւ և ուրացութեան չհաւանելուն համար կտտամահ սպանուեցաւ (Կալանոս. Ս. 44): Արշակայ մահը հաւանական հաշուով տեղի ունեցաւ 370—371 ձմեռուան մէջ:

Թագուհւոյն մահուան մէջ ալ նմանօրինակ դիտողութեան տեղի կը տեսնեմք: Ըստ Խորենացւոյ Փառանձեմ սպանուած է յԱսորեստան «ընդ սալլացից հանեալ» (Խոր. 80): Իսկ Բուզանդ կրօէ թէ ազգին նախատինք մը ըլլալու համար, Փառանձեմ բոլոր զօրաց և ժողովրդեան առջև հրասպարակ բերուեցաւ, և թակարդի մէջ ձգուելով պղծութեամբ անարգուեցաւ և սպանուեցաւ (Բուզ. 178): Երկուքն ալ «սատակեցին» բառը կը գործածեն Փառանձեմայ համար, իբր իւր չարութեանց արժանաւոր սլատիժը գտած: Սակայն նախարարաց կիներուն վրայ գործուածը իմանալէն, և Շապուհի «մեծաւ շնորհակալութեամբ» Փառանձեմը իւր զօրաց ձեռքէն ընդունելը կարգալէն (Բուզ. 178), և Փառանձեմայ բոլոր հայ կանանց գերազանցը լինելը գիտնալէն ետքը, անհնար է որ Շապուհ հաւատոց և սրբութեան փորձի ենթարկած չլինի դժբաղդ ալ չըբնաղ թահուհին, և եթէ տակաւին չարաչար մահուամբ սպաննած է զայն, հարկաւ թշուառ թագուհին իւր դիմագրութեամբ հրաւիրած է իւր վրայ Շապուհի անգթութիւնը: Փառանձեմայ մահը պէտք է դնել Արշակայ մահէն քիչ յառաջ 370 ի վերջ:

10. ՎԵՐՋԻՆ ԳՈՐԾԵՐ ԵՒ ՄԱՀ

Եղելութեանց և Ներսէսի կեանքին դառնալով, մեր նպատակէն դուրս կը նկատեմք երկրին ապահովութեան

համար Մամիկոնեան Մուշեղ սպարապետին ըրածները պատմել: Այլ նկատել կուտամք թէ տասնամեայ շարունակ շփոթութեանց միջոցը փակուելուն և խաղաղութեան նշույլներ սկսելուն վրայ, Ներսէս նորէն ձեռք առաւ իւր բարեկարգիչ և շինարար աշխատութիւնները, կործանեալը կանգնել, տապալեալը ուղղել, աւերեալը նորոգել, եկեղեցիները շինել, աղքատներ և ախտաւորներ խնամել, պաշտօնեաները լրացնել, հոգևոց տեսչութիւնը ընդարձակել, և իշխանական հոգածութեան հետեւել. ահա Ներսէսի վերջին աշխատանքները, իւր սրտին մօտ ու սիրելի աշխատանքներ (Բուզ. 218):

Այդ զբաղմանց մէջ ալ ևս Ներսէսի մօտ չեմք գտներ իւր հաւատարիմ Խաչը: Վերջին անգամ լիշուեցաւ նա երբ իւր խնամի Ապահունիներու ձեռքը Արշակայ սպաննալիքէն ազատեցաւ: Կերևի թէ ծերունին Խաչ այդ յուզման վրայ ալ ևս չկրցաւ կազդուրուիլ, և քիչ ետքը խաղաղութեամբ վախճանեցաւ. և որովհետև քարկոծման վտանգը զինքն ցնցեց, Յայսմաւուրքը քարկոծմամբ նահատակեալ կը գրէ Խաչայ համար: Եկեղեցին նորա լիշատակը կը տօնէ Ներսէսի հետ ի միասին:

Մասնաւոր լիշատակ մը. թէ ոչ ամենայն ստուգութեամբ, գոնեա բաւական հաւանականութեամբ կը ցուցնէ Ներսէսի ընդհանուր եկեղեցւոյ համար ալ տարած հոգածութիւնը. Ս. Բարսեղ 370-ին յաջորդած էր Նւսեբիոսի յաթոռն Կեսարիոյ, և իւր առաջին ջանքը եղած էր Սրբիանոսաց ազդեցութիւնը կոտորել, որք Վաղէսի պաշտպանութեամբ ուղղափառութեան վրայ կը սպառնային: Բարսեղ այդ նպատակաւ շատ աշխատեցաւ և շատ գրեց: Իւր թուղթերուն մէջ կայ 32 եպիսկոպոսաց կողմանէ ուղերձ մը առ եպիսկոպոսունս Խաչիոյ և Գաղղիոյ (Բարսեղ. թուղթ. ԴԲ): որպէս զի մի-

ջամտեն և օգնեն Արևելեաց՝ արիանոսութեան դէմ: Այդ ստորագրութեանց 29-րդն է Ներսէս, և որովհետև այդ 22-ներէն շատեր նշանաւոր անուններ են և բնաւ մէկն ալ թեմի կոչումը ի միասին չունի, ուստի գրանուած անունները ժամանակին ականաւոր եպիսկոպոսաց կը յատկացուին, և ինչպէս առաջին երեքը՝ Մելիտոս և Եւսեբիոս և Բասիլիոս, իբր Անտիոքայ և Սամոսատայ և Կեսարիոյ նշանաւոր հայրապետները կընդունուին, այսպէս Ներսէսն ալ իբր Հայոց հայրապետ ընդունուած է օտարներէն (Guerin, Բ. 1168): Այլք Ներսէսի մօտ եղող Յուակ անունն ալ Հայոց կը վերագրեն (Fialon. 121):

Կժուարութիւն կը պատճառէ Ներսէսի անունը շատ վերջերը տեսնելը, և նորա Կեսարիա երթալուն բնաւ լիշատակ մը չգտնուիլը: Ուղերձը թուական չունի, ալլ ընդհանրապէս ընդունուած է 372 թուականը (Guerin. Բ. 1166, Fialon 121) և խաղաղութեան միջոցին դժուար չէր Ներսէսին Կեսարիա երթալ. և այդ առթիւ Կապադովկիոյ մեծ կուսակալին հետ ալ տեսակցիլ: Թէպէտ 372 յունուար 6 ին Վաղէս կը գրանուի ի Կեսարիա (Guerin. Բ. 1171), ալլ 372 յունիսին կը լիշուի Կապադովկիոյ գաւառական ժողով մը (Guerin Բ. 194, Peltier Ա. 459), և թերևս այդ ժողովոյն մէջ հիմ գրուեցաւ լիշեալ ուղերձին, և բացականերու կամ թէ ուշ հասնողներու ստորագրութիւնները հետզհետէ աւելցուեցան. և այս պատճառով Հայոց Հայրապետին անունը վերջերը մնաց, կամ թէ առաջ յունական սահմանաց եպիսկոպոսները ստորագրեցին գաւառական համախմբութեամբ. և օտարները վերջը թողուեցան կամ մնացին: Թերևս ալ ստորագրող Ներսէսը որ և է ուրիշ եպիսկոպոս մըն է Պոնտոսի հայրապետական փոճակներէն, քանի որ հարկաւ Հայոց հայրա-

պետն է ըսելու յայտնի և ստոյգ նշան մը չկայ:

Հանդարտութեան տարիներ խորհրդաւոր եղան Ներսէսի հայրապետութեան վերջը ցուցնելու. ինչպէս եղած էր սկզբնաւորութիւնն ալ. 373 թուականը Ներսէսի վերջին տարին եղաւ:

Ներսէսի պատմութեան ազգային առաջին գրողներ, բացարձակապէս Պապ թագաւորի ձեռօք թունաւորուած կըսեն (Խոր. 92, Բուզ. 222, Վարք 85), և անոնց հետևողութեամբ ամեն պատմագիրներ նոյնը կը կրկնեն: Բայց մեք հարկ կը սեպեմք դիտել տալ որ մահուան պարագաներ չեն ստուգեր թունաւորման ենթադրութիւնը, քանի որ ամենայն ինչ գաղտնի եղելութեան մը շուրջը կը դառնայ, ալլ ընդհակառակն կը ցուցնեն թէ Ներսէս պարզապէս կազմուածոյ տկարութեամբ և հիւժական ախտով և 20 տարի տառապալից հայրապետութեան հետևանօք կանխահաս մահուամբ վախճանած է հազիւ 47 տարեկան հասակին մէջ: (Ներսէս Վարժապետեան պատրիարքն ալ 47 տարեկան մեռաւ, 1837 - 1884):

Արշակայ և Ողոմպիադայ ամուսնութիւնը 350-ին զնելով, ուստից յառաջ տանել անհնար է, Պապ 351-ին ծնած և 368-ին 17 տարեկան նորահաս պատանի մը կը լինի ի թագաւորելն: Առջի օրէն ահաւոր վտանգներու մատնուած և հազիւ 3 տարի ետքը հանդարտութեան երես տեսնել սկսած, և 391-ին 20 տարեկան երիտասարդ մը, խոհական անձ մը չլինար ենթադրուիլ Պապ թագաւորը, մանաւանդ որ յունական երկրին կեանքն ալ զինքն զուարճութեանց և վայելից վարժեցուցած պիտի ըլլար: Երբ թագաւորական աթոռին վրայ հանդարտութիւն և վայելից դիւրութիւն տեսաւ, երիտասարդական անխորհրդածութեամբ անոնց հետևիլ սկսաւ:

Մեր պատմիչք ամեն տեսակ զազրագործութիւններ կը վերագրեն Պապին, զորս գրչի տակ աւնուլն ալ աղտեղի է: Բայց որ ամենէն անտանելին է կենթադրեն թէ Փառանձեմ տղան սատանաներու նուիրեց, որք այս պատճառաւ տեսանելի և անտեսանելի կերպերով անկէ չէին բաժնուեր և ուզածնին ընել կուտային անոր: Կախարդասար գաղափարներ և գործեր դարուս մէջ շատ զարգացած էին. Վաղէսի Անտիոք քաղաքի մէջ գործած յիմարութիւնները և յիմարութիւնները բաւական են զայդ հաստատել: Զարմանալի է որ նոյն իսկ լատին պատմագրին վկայութեամբ կը հաստատուի այդ. երբ Դանիէլ և Բարզիմեր յոյն գնդապետներ չլրցան Պապը ձերբակալել, ինքզինքնին արդարացուցին ըսելով թէ Պապ կախարդական արհեստին մէջ ունեցած գերազանցութեամբ յաջողած էր անտեսանելի մնալ իրենց գունդերուն առջև (Ամմ. 330):

Բայց Պապայ երիտասարդութիւնն ալ բաւական էր, որ Ներսէս զինքն շարունակ խրատէր և յանդիմանէր, և բնական էր որ Պապն ալ սիրով չտանէր եռանդնոտ հայրապետին կծու եպերանքները: Պապ կրնար յայտնի կամ գաղտնի գանգատներ ընել, կրնար հայրապետին ալ զիմադրած, ցաւած և ցաւցուցած ըլլալ, մինչև իսկ անոր ձեռքէն ազատելու խօսքեր խօսել, քայց այս կէտէն մինչև թունաւորելու կէտը այնպիսի վիճ մը կայ, որ երկու կէտերը շուտով իրարու չեն գար: Մթթէ դժուար էր Պապին՝ խրատողը անարգել և յարաբերութիւնն խզել և Ներսէսը լռեցնել: Ո՞չ ապաքէն Ներսէսի կողմէ յանդիմանութիւնները շարունակելն՝ ակնկալութեան նշոյլ մը տեսնելու արդիւնքն է:

Այդ միջոցներուն յորս Ներսէսի յանդիմանութիւններն աւելի են և սպառնալիքներ ալ եղած են եկեղեցական տեսակէտով, Պապ զղջման և հաշտու-

թեան ձևով և հայրապետին պաշտպանութիւնը իւր վրայ հրուիրելու դիտմամբ՝ հրաւեր կընէ հայրապետին ի Խախ գիւղ Դարանաղի գաւառին, և մեծահասկոչուք կուտայ, պատուոյ տեղը Ներսէսի կուտայ, մինչև իսկ տարիքին բերմամբ սպասուորութիւն կընէ, ոտք կելնէ և արքունական զգեստը թողլով իւր ձեռքով բաժակ կը մատուցանէ Ներսէսի: Այս բաժակն է որ բոլոր կասկածներու հիմ եղած է (Բուգ. 222, Վարք 85):

Պատմութիւնը կըսէ թէ Ներսէս իմացաւ բաժակին թունաւոր լինելը, յանդիմանեց թագաւորը և գոհուութիւն մատուց Սատուծոյ: Այլ եթէ Ներսէս իմացած էր իրօք, աւելի անձնասպանութեան քան թէ առաքինութեան գործ կատարած կըլլայ այն բաժակը խմելով: Նախարարներէն Մուշեղ և Բագարատ և Համամ և այլք, և Ներսէսի աշակերտներէն Մեսրոպ և Տրդատ և ուրիշներ, որք ներկայ էին, կրնային ներել որ Ներսէս գիտնալով և յայտնելով թունաւոր բաժակը խմէր: Այս պարագայք ըստ մեզ ծանրակշիռ են:

Թագաւորին ապարանքէն Ներսէս իւր օթեւանը կուգայ, և ոմանք մինչև Թիլ կը բերեն զինք (Նշխ. 23): Այստեղ Ներսէս ցոյց կուտայ սրտին վրայ նկանակի չափ կապուտակեալ տեղ մը. և բերնէն երկու ժամ շարունակ գունտ գունտ արիւն կը հոսի, և երբ իրեն թիւրակէ և անդեղեայ կը մատուցանեն, կը մերժէ, որպէս զի չապրի և շուտով մեռնի: Աստ ևս թունաւորուած Ներսէսի վերագրուած գործեր՝ առաքինութեան փաստեր չեն. հետեւապէս ճշմարտանման չեն: Այլ լաւ կը բացատրուին երբ ըսուի, թէ Ներսէս ներքին անբուժելի ախտով կը տառապէր, որուն օգուտ չէին կրնար ընել մատուցուած դեղերը. և ինքն իւր վերջը եկած և դարմաններուն անպիտան լինելը գիտնալով,

կը մերժէր ուրիշներէ սուանց գիտակցութեան առաջարկուած միջոցները:

Խորենացի շատ համառօտ կանցնի Ներսէսի մահուան պատմութիւնը (Խոր. 92), իսկ Բուզանդ բազում ինչ խօսեցաւ կրտէ (Բուզ. 223), և ասկէ առիթ առնլով վարուց պատմիչներն ընդարձակ ճառեր կը գնեն մահամերձ հայրապետին բերանը: Հայոց և Յունաց աշխարհներուն աշխարհային համար ճշտեալ գուշակութիւններ, արևմտեան և արևելեան երկիրներուն ապագայ դիպուածոց յատուկ կանխասացութիւններ, յորս շատ են Խաչտիկաց ժամանակին պատկանող ոչ միայն եղելութիւններ, այլ և բառեր և բացատրութիւններ: Ապա կը խօսի Նեոնի գալստեան և աշխարհի վախճանին և լեաին դատաստանին վրայ, օրհնութիւններ կը կարգայ հեռաւորաց և մերձաւորաց, և խրատներ կուտայ շրջակայից:

Անկէ ետքը կենէ եկեղեցի կիջնէ և անձամբ կը խօսի *ողջոյնները*, որք այժմեան քահանայաթաղին մէջ ալ կան, և աթուրին վրայ բազմելով կակսի *օծնը իւղովը*, թէպէտ յետոյ օծման խօսք չկայ. եկեղեցիէ դուրս կելնէ և ծխարանին թաղման ընդարձակ աղօթքը ինքնին կը գրուցէ, և իւր թաղման կարգը ինքն լրացնելով հոգին կաւանդէ: Եթէ այս ամեն պարագայք ճշտիւ պատմական լինէին, որուն չերաշխաւորեր միայնոյ վարուց պատմագրին ներբողական ձևը, դարձեալ աւելի կը մերժէին քան թէ կը հաւաստէին թունաւորուելուն պարագայն:

Մահուան թուականը վարուց պատմիչէն միայն ըսուած է Հրոտից ամիս, օր հինգշաբթի (Վարք 112): Մեր տուած 373 թուականին հինգշաբթի կը հանդիպին Հրոտից 5, 12, 19 և 26 օրերը. և ահա Աւգերեան ալ ճառընտիրէ մը քաղելով Հրոտից 5 թուականը

կուտայ, դարձեալ հինգշաբթի օր (Վարք Սրբոց. Գ. 393), և այս յարմարութիւնը փաստ մըն ալ կը լինի ի նպատակ մեր ժամանակագրութեան: Իսկ Հրոտից 5-ը, Հայոց շարժական տոմարին հաշուով կը լինի 373 յուլիս 25: Գոստանդնուպոլիս տպուած Վարքը կը գնէ Նաւասարգի 30, օգոստոսի 29, օր հինգշաբթի (Վարք 202), և թէպէտ օգոստոս 29-ը հինգշաբթիի հանդիպի, սակայն այն օր Նաւասարգի 5 կը լինի և ոչ 30: Հին ձառոցը կը գնէ Տրէ 11, որ շարժական տոմարով կը լինէր դեկտեմբեր 3, իսկ անշարժով կը լինի նոյեմբեր 19, ինչպէս ունին այժմեան յայտնաւորքներն ալ: Իսկ մեք ամուր կը պահեմք 373 յուլիս 25 թուականը, որ աւելի ստուգութեան երաշխաւորութիւն կընծայէ:

Սրբոյ հայրապետին մահը տեղի ունեցաւ ի Խախ, ուր կը գտնուէր Պապի հետ տեսնուելու համար: Մարմինը աշակերտաց երիցագունին Տրդատայ հսկողութեամբ և ամենայն հանդիսութեամբ և արքունական շքեղութեամբ, և թագաւորին և ամենայն մեծամեծաց ընկերակցութեամբ բերուեցաւ Եկեղեաց գաւառի Թիլ աւանը, ի սեփական կալուած Լուսաւորչեան տոհմին: Թորգանի մեծ դամբարանը չտարուելուն պատճառը հարկաւ սրբոյն փափագն եղած է, վաղամեռիկ ամուսնոյն Սանդխտոյ քովը թաղուելու համար:

Լուսաւորչայ ցեղին կալուած եղող տեղերը 15 հատ եղած են ըստ Բուզանդայ (Բուզ. 117), բայց ոչ թէ ամբողջ գաւառներ, այլ պարզ աւաններ իրենց շրջակայ գիւղերով և ագարակներով, որ կրնան կերպով մը գաւառ կոչուած լինել: Յիշեալ 15-էն միայն 6 հատի գաւառի անունները ունիմք, այսինքն է Այրարատ, Դարանաղի, Եկեղեաց, Տարոն, Բղնունիք և Ծովք, և այս վեցէն ալ միայն երեքին աւանները նշանակուած կը

գտնեմք, Թորգան ի Դարանաղի, Թիլ լԵկեղեաց, և Աշտիշատ ի Տարոն:

Լուսաւորչեան կալուածներ՝ նախկին քրմապետին կամ գլխաւոր տաճարաց քուրմերուն կալուածներն էին, որք Տրդատայ ձեռօք Լուսաւորչի տրուեցան, և ամենն ալ ընտիր և բարեբեր տեղեր էին: Հայր Մարգարտանգամ մը Ներսէսի այցելելու առթիւ Ա. տիշատ հանդիպած ատեն այնչափ զմայլեցաւ, որ երբ քիչ մը գլուխը տաքցուց, սկսաւ Տրդատայ և Արշակունեաց ազգի և տակի և տոհմի թշնամանել (Բուզ. 117), որ լաւագոյն տեղեր կանանցահանդերձ մարդկան է տուել, և կը սպառնայր Արշակայ ձեռքով ետ առնուլ: Բայց խեղճը նպատակին չհասաւ, անկէ ելնելուն Շաւասպ Արծրունիին հանդիպեցաւ, որ իւր ցեղին կոտորուելուն վրէժը լուծելու համար, Մարգարտը մացառուտ անտառ մը տարաւ, և որսի պատճառանօք նետահար սպաննեց (Բուզ. 118):

Թիլայ կաթողիկէն, ուր էր ևս Ներսէսի գերեզմանը, կործանեցաւ է. դարուն աւերածոց մէջ, և գերեզմանը անյայտ մնաց մինչև 1272 փետրուար 1, յորում յայտնուեցաւ Պատուական սարկաւազի ձեռամբ և պատուեցաւ Սարգիս եպիսկոպոսի ձեռօք: Թիլայ կաթողիկէն նորոգուեցաւ, ալ ոսկրներէն մաս մը Երզնկա տարուեցաւ, և բազուկներէն մին դրուեցաւ Տիրաշէնի վանքը, որ է այժմեան Երզնկայի Ներսէս Հայրապետի վանքը: Քի գիւղի մօտ: Նշխարաց գիւտի պատմութիւնը գրուած է Երզնկացի վարդապետէ մը, որ հաւանաբար է նոյն ինքն Յովհաննէս Պուլզը, Ա. Ներսէսի յատուկ շարականին ալ հեղինակը: